ՀԱՄԵՆԱՀԱՑ ՀԱՄԱՑՆՔԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ 1918-1920 ԹԹ.

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱՑԻԼԵԱՆ
maestro@web.am

ՄՈՒՏՔ

1917ին բոլշեւիկեան կառավարութեան իշխանութեան գալը եւ նրա կարգադրութեամբ կոմունիստական կարգախօսների իրականացումը քաղաքացիական պատերազմի խթան դարձան Ռուսաստանում, ինչպէս նաեւ՝ Այսրկովկասի առանձնացման պատճառ։ 1918 Մայիսի 26ին հռչակուած Վրաստանի Դեմոկրատական Հանրապետութիւնը չունէր միջազգայնօրէն համաձայնեցուած սահմաններ եւ վրացաբնակ գաւառներից բացի յաւակնում էր նաեւ կազմալուծուած Ռուսաստանի Կայսրութեան մի շարք տարածքների, այդ թւում՝ Սեւ Ծովի ափին գտնուող Սուխումիի[1] (Աբխազիա) եւ Սոչիի շրջաններին։ Այդ երկրամասում Վրաստանի բանակը առճակատել էր բոլշեւիկների զինուած ուժերի հետ, որոնք ձգտում էին կոմունիստական կարգեր հաստատել Այսրկովկասում։ Վրաստանի կառավարութեան տարածքային յաւակնութիւնները՝ հանրապետութիւնը բախման բերեցին Ռուսաստանի հարաւում հզօրացած «Սպիտակ Շարժման» հետ։ Վերջինիս առաջնորդները, բացի հակաբոլշեւիկեան պայքարի, մարտնչում էին միաժամանակ յանուն «միասնական եւ անբաժանելի» Ռուսաստանի։ Թէ՛ բոլշեւիկների, թէ՛ «սպիտակ» մեծապետականների կրկնակի վտանգին դիմադրելու համար Վրաստանի կառավարութեանը անհրաժեշտ էր ազգային գաղափարների շուրջը արագօրէն համախմբել երկրի վրաց բնակչութեանը։ Այդ քաղաքականութեան իրականացումը զուգակցւում էր վրաց հասարակութեան ներսում ազգայնական տրամադրութիւնների աննախադէպ աճով։ Կենսունակ վրացական պետութեան արագ ստեղծման անհրաժեշտութեանը զոհաբերւում էին նաեւ Վրաստանում ապրող ազգային փոքրամասնութիւնների շահերը, որի հետեւանքով նրանց եւ վրաց իշխանութիւնների միջեւ փոխյարաբերութիւնները կամայ թէ ակամայ լարւում էին։ Ազգային փոքրամասնութիւնների պահանջները վրաց քաղաքական շրջանակների կողմից երբեմն մեկնաբանւում էին որպէս «հակավրացական»։ Դրա հետեւանքով պակաս չէին նաեւ դէպքեր երբ վրաց ազգայնական մամուլում ոչ-վրացի ազգութիւնների, յատկապէս հայերի, վտարման կոչեր էին հնչում։

Ազգային փոքրամասնությունների կացությեան չլուծուած խնդիրները հրաշալի առիթ էին ստեղծել թէ՛ «սպիտակների»ն եւ թէ՛ Ռուսաստանի կոմունիստական կառավարութեան՝ միջամտելու Վրաստանի ներքին գործերին։

Սուխումի եւ Սոչիի շրջաններում հայ-վրացական, հայ-աբխազական եւ հայ-ռուսական ազգամիջեան յարաբերութիւնների խնդիրները կոմունիստական ամբողջատիրութեան ժամանակաշրջանում դժուար էր ուսումնասիրել եւ մեկնաբանել՝ գիտական հասարակութեան կողմից։ Այժմ պայմանները փոխուել են։

Ձեռնարկելով հետազօտութեանը, հեղինակը ելնում է այն հանգամանքից, որ Վրաստանում 1918-1920ի համշէնահայ համայնքի կացութիւնը քննող համապարփակ, հաւաքական եւ ժամանակագրական սկզբունքների վրայ հիմնուած աշխատութիւններ առայժմ չկան։ Խնդրի հետազօտումը պահանջում է նախեւառաջ ուսումնասիրել Վրաստանի Հանրապետութեան կազմում համշէնահայ բնակչութեան յայտնուելու եւ երկու պետական կառոյցների՝ Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ նրա ընդհանուր զանգուածի յետագայ բաժանման հետ կապուած հարցերը։ Հետազօտողների տեսադաշտից բաց է մնացել յատկապէս Վրաստանի համշէնահայ համայնքի շահերը ներկայացնող Սուխումի եւ Սոչիի շրջանների Հայոց Ազգային Խորհուրդների (ՀԱԽ) գործունէութիւնը։ Այս շարքում իր ուրոյն տեղն է գրաւում Սուխումում Հայաստանի Հանրապետութեան (ՀՀ) հիւպատոսարանը, որը բացուել էր համշէնահայերի քաղաքացիական պատկանելիութեան հարցի պարզաբանման եւ նրանց հայրենադարձութեան խնդրով զբաղուելու համար։ Վրաստանի Հանրապետութեան համշէնահայ համայնքին վերաբերուող անցուդարձերը փոխադարձաբար սերտօրէն կապուած էին վիրահայութեան ընդհանուր կացութեան հետ։

Ժողովրդավարական Վրաստանի եւ համշէնահայ համայնքի միջեւ յարաբերութիւնների խնդրի ուսումնասիրման, վերլուծման ու գիտական ընդհանրացման նշանակութիւնը եւ արդիականութիւնը պայմանաւորուած են ինչպէս յիշեալ ժամանակաշրջանում Աբխազիայում եւ Սոչիի շրջանում հայ-վրացական յարաբերութիւնների պատմութիւնը գիտականօրէն եւ ամբողջականօրէն ներկայացնելու անհրաժեշտութեամբ, այնպէս էլ հայագիտութեան համար Վրաստանի հայկական համայնքի կացութեան ուսումնասիրման առանձնայատուկ դերով։

* * *

Աւարտելով կովկասեան պատերազմը 1864ին, Ռուսաստանի կայսրութիւնը վերջնականօրէն իր կազմում ամրացրեց Կովկասին յարակից Սեւ Ծովի ափը։ Դրա հետեւանքը եղաւ հազարաւոր լեռնականների հեռանալը՝ Օսմանեան կայսրութիւն։ Բազմաթիւ արխազներ, դժգոհ լինելով ինքնավար արխազական իշխանութեան վերացուելուց, արտագաղթեցին պատմական հայրենիքից նաեւ 1877-1878ի ռուս-թուրքական պատերազմի ընթացքում։ Միաժամանակ, նուաճուած երկրամասը արագօրէն բնակեցուեց էթնիկ տարբեր խմբերով՝ ռուսներ, յոյներ, մեգրէլներ, էստոնացիներ, գերմանացիներ, հայեր։ ԺԹ. դարի վերջերին հայոց ներգաղթը այս տարածք՝ զգալի աճեց, մանաւանդ 1894-1896ի սուլթանական Թուրքիայում կոտորածների հետեւանքով։ Համշէնահայ[2] գաղթականները հիմնականում բնակւում էին Սոչիի եւ Սուխումի շրջաններում։ Հայերի վերաբնակեցմանը նպաստում էին ռուս գործարարները, քանի որ նրանք լաւատեղեակ էին ծխախոտագործութեան ասպարէզում համշէնահայերի վարժ մասնագէտ լինելուն[3]։ Հայ գիւղացիները կապալավարձի հիմունքներով կալուածատէրերից վերցրած տարածութիւններում կարճ ժամանակամիջոցում հիմնեցին ծխախոտի տնկաստաններ։ Մի քանի տարում նրանց աճեցրած բարձրորակ ծխախոտը նուաճեց Ռուսաստանի շուկան. համշէնահայերը մեծ դեր ունեցան երկրամասի տնտեսական զարգացման գործում[4]։

Սակայն ռուսական իշխանութիւնը երկրամասի համշէնահայ բնակչութիւնը դիտում էր որպէս ժամանակաւոր վերաբնակիչ եւ չէր շնորհում Ռուսաստանի կայսրութեան հպատակութիւն[5]։ Միայն համշէնահայերի 5%ը տարբեր միջոցներով ձեռք բերեց հպատակութիւն, որի շնորհիւ էլ նրանք գնեցին մշակուող հող[6]։

1918 Ապրիլին Աբխազիայում ժամանակաւոր հաստատուեցին խորհրդային կարգեր. տեղի հայերի աջակցութիւնը ստանալու նպատակով բոլշեւիկները քարոզչութիւն էին տանում՝ խոստանալով, որ նոր իշխանութեան օգնութեամբ նրանք առանց հպատակութիւն ստանալու կարող են տիրել կապալավարձով մշակուող հողատարածքներին[7]։ Սակայն դեռեւս 1918ի Փետրուարին հայերից կազմուած Կարմիր Գուարդիայի ջոկատը, որը գտնւում էր Սուխումի Բանուորական Պատգամաւորների Խորհրդի ենթակայութեան տակ եւ համակրանքով էր վերաբերւում սոցիալ-դեմոկրատների[8] կարգախօսներին, վճռական դեր ունեցաւ տեղի բոլշեւիկների ելոյթի ճնշման գործում[9]։ Միւս կողմից, սակայն, 1918ի գարնանը բոլշեւիկներին օժանդակում էր Ցերելդա աւանում Ղազար Կերսելեանի եւ Եակովբ Զէյթունեանի ջանքերով ստեղծուած 200 հո-

գիանոց Հայկական Ջոկատը։ Աբխազիայի բոլշեւիկեան ղեկավար մարմինների անդամ էին Գէորգ Աթարբեկովը (Աթարբեկեան, Սուխումի Զինյեղկոմի նախագահի տեղակալ) եւ Կերսելեանը (բոլշեւիկեան Կարմիր Գուարդիայի ղեկավար)։ Միաժամանակ, Գուդաուտայի տեղամասի հայաբնակ կաւաքլուք գիւղի բնակչութեան ելոյթը բոլշեւիկների դէմ վկայում էր տարբեր քաղաքական ճամբարներում Աբխազիայի հայերի բեւեռացման մասին[10]։

Ռուսական կայսրութեան տապալումից յետոյ աբխազական ազգային շարժման մի շարք գործիչներ առաջ քաշեցին Թուրքիայից մոհաջիրների (վտարանդի աբխազներ) հայրենադարձութեան գաղափարը[11], միաժամանակ իրաւազուրկ եւ ժամանակաւոր բնակիչ յայտարարելով Աբխազիայի հայերին ու յոյներին, որոնց մեծ մասը այդպէս էլ մնաց գաղթականի կարգավիճակում եւ համարւում էր թուրքահպատակ[12]։ Լայն տարածում ունէր «Աբխազիան՝ աբխազների համար է» կարգախօսը[13]։ Սակայն կար նաեւ Սուխումի քաղաքային դումայի գլուխ Վենիամին Զխիկուիշուիլիի 1918ին արուած վկայութիւնը այն մասին, որ աբխազները ունեն հաշտ դիրքորոշում բոլոր ազգութիւնների նկատմամբ[14]։ Այսրկովկասի Սէյմի[15] կառավարման հաստատումից յետոյ, օգտուելով իշխանութեան թուլութիւնից, Սուխումի շրջանի Կոդորի եւ Գուդաուտայի տեղամասերում բնակուող հայերը (յատկապէս Պսիրցխա, Անուխա, Մծարա գիւղերում) կողոպտուեցին թուրքամէտ աբխազների եւ տեղի թուրքերի կողմից։ Տեղահան արուեց մօտ 400 հայ ընտանիք, որոնք հեռացան դէպի Կուբանի մարզ[16]։ Չկարողանալով անմիջականօրէն տիրել Աբխազիային, սուլթանական Թուրքիայի իշխանաւորները կազմակերպեցին աբխազ մոհաջիրներից բաղկացած դեսանտ, որը ներխուժեց Կոդորի տեղամասը 1918ի ամռանը[17]։ Այս իրադարձութիւնների ժամանակ ձեւաւորուեց Սուխումի Հայոց Շրջանային Ազգային Խորհուրդը, որը իր վրայ վերցրեց տեղի հայերի ֆիզիկական եւ քաղաքական պաշտպանութիւնը։

Սուխումի ՀԱԽի նախագահութեան կարծիքով, աբխազները, ունենալով թուրքամէտ դիրքորոշում, ձգտում էին թուրքերի միջոցով տեղահան անել հայերին։ Այդ իսկ պատճառով ՀԱԽը աջակցում էր Վրաստանի կառավարութեան քաղաքականութեանը Աբխազիայում եւ յոյս էր տածում, որ դա միակ ուժն է, որը ապահովում է հայերին թուրքական վտանգից եւ աբխազների ոտնձգութիւններից[18]։ Սուխումի քաղաքային դումայի իրաւասու Նիկոլայ Թաւդգիրիձէն գրում էր. «Ունեւոր աբխազ գիւղացիները երազում են վտարել Աբխազիայից վրացիներ-

ին եւ ընդհանրապէս բոլոր վարձակալներին ու ինքնուրոյն վերաբաշխել նրանց հողամասերը»[19]։ Ահա թէ ինչու համշէնահայ համայնքը ողջունում էր երկրամասում վրացական իշխանութեան հաստատումը, յատկապէս խուսափելով թուրքական վտանգից։

Վերացնելով Սուխումի շրջանին սպառնացող թուրքական եւ բոլշեւիկեան վտանգը, նորաստեղծ Վրաստանի Հանրապետութեան բանակը առաջխաղացում ունեցաւ դէպի մերձծովեան այլ շրջաններ։ 1918 Յուլիսին վրացական զինուած ուժերը մուտք գործեցին Սոչի։ Վրաստանի կառավարութիւնն այդ քայլը բացատրում էր ռազմական անհրաժեշտութեամբ, ինչպէս եւ «բոլշեւիկեան անիշխանութեանն» վերջ տալու առաքելութեամբ։ Այս շրջանում բնակւում էր 25000 հայ[20]։ Բոլշեւիկների հեռանալու օրը հայերը իրենց վրայ էին վերցրել ինչպէս հասարակական կարգապահութեան հսկելու, այդպէս էլ Սոչիի երկաթուղային կայարանի եւ փոստի պահպանութեան պարտականութիւնը[21]։ Յուլիսի 11ին Վրաստանի կառավարութեանը յղած հեռագրում հաղորդւում էր, որ վրացական զօրքերի մուտքը՝ նշուած շրջան, արտանց ողջունւում էր բնակչութեան կողմից[22]։ Ինչպէս վկայում է Սոչիի ՀԱԽի 1918 Օգոստոսի 24ի նամակը՝ ուղղուած Թիֆլիսում ՀՀ դիւանագիտական ներկայացուցչին, շրջանը Վրաստանին ենթարկելով, նոր իշխանութիւնն առաջ քաշեց հայերի հպատակութեան հարցը։ Իշխանութիւնները առաջարկում էին ընդունել Վրաստանի քաղաքացիութիւն որին՝ ըստ ՀԱԽի, տեղի հայերի մեծամասնութիւնը կողմնակից էր, քանի կար մշակուող հողերից զրկուելու վտանգ[23]։ Այս հարցի նշանակութիւնը կարեւորւում էր տեղի հայերի 90%ի գիւղացի լինելու հանգամանքով[24]։ Ընդունելով քաղաքացիութիւնը, հայերը միաժամանակ համաձայն էին զօրակոչուել վրացական բանակ[25]։

Սակայն շրջանում վրացական զօրքերի ներկայութեան յաջորդ իսկ օրից անսպասելի սկսուեցին որեւէ կերպ չբացատրուած հալածանքներ՝ տեղի բնակչութեան, առաւելապէս՝ հայերի նկատմամբ[26]։ Զինուորականների խմբերը ներխուժում էին հայկական բնակավայրերը, յափշտակում ձիերը, կողոպտում դրամ եւ այլ թանկարժէք ունեցուածք, միաժամանակ ենթարկելով ծեծի՝ ոչ միայն տղամարդկանց, այլ նաեւ կանանց եւ երեխաներին, այս ամէնը հիմնաւորելով տեղի հայերի՝ բոլշեւիկներին աջակցելու փաստով։ 1918 Յուլիսի 22ին Տուապսէի կողմից կարմիր Բանակի անյաջող հակայարձակումից յետոյ, նրա մարտիկները նահանջելով զէնք էին թողել հայաբնակ Նիժնէէ (Ներքին) Լօо գիւղում։ Յայտնաբերելով այն՝ վրացական զինուորականները մեղադ-

րել էին հայերին «կարմիրների» շարքերում վրացական բանակի դէմ մարտնչելու մէջ, եւ ձերբակալել էին տեղի 14 գիւղացու, ցանկանալով նրանց յանձնել ռազմական դատարանի։ Մեծ դժուարութեամբ Սոչիի ՀԱԽին յաջողուեց ապացուցել մեղադրանքի անհեթեթութիւնը, թէպէտ այս գործի առիթով մեծ աղմուկ բարձրացրած վրացական պաշտօնեաները հրապարակայնօրէն չարեցին որեւէ հերքում։ Անհրապոյր դեր էր ունեցել տուեալ միջադէպում տեղի կոմիսար (գիւղապետ) Լաւրենտի Կուերկուիլիան, որը կեղծ մատնութիւն անելով ռազմական իշխանութիւններին՝ հայերի կողմից նախապատրաստուող ապստամբութեան մասին, պատժամիջոցների կիրառման ժամանակ բռնութիւններից փրկելու համար հայերից կաշառք էր պահանջում։ Նման միջոցների նա դիմում էր եւ յետագայում «հովանաւորութիւն» ցուցաբերելու համար[27]։ Անպարկեշտ էին իրենց պահում նաեւ մի շարք այլ պաշտօնեաներ ինչպէս՝ Գոռնոէ (Լեռնային) Լօռ գիւղի կոմիսար Ջիչիրայան։ Վրաստանի կենտրոնական իշխանութիւնները, նկատի ունենալով բազմաթիւ բողոքները, որոշել էին փոխել շրջանի հայաբնակ վայրերում նախկինում նշանակուած գիւղապետերին։ Սակայն 1918 Դեկտեմբերին Հայաստանի եւ Վրաստանի միջեւ առաջացած պատերազմի ժամանակ վրացական կառավարութիւնը այս մտքից հրաժարուեց[28]։

Սոչիի ՀԱԽի բոլոր դիմումների նկատմամբ վրաց ռազմական իշխանութիւնը արդէն ցուցաբերում էր արհամարհական վերաբերմունք եւ դրանով իսկ, ՀԱԽի կարծիքով, քաջալերւում էին նորանոր բռնութիւններ։ Ընդհակառակն, վրաց բարձրաստիճան քաղաքացիական իշխանութիւնները փորձում էին չափաւորել զինուորականների վարքագիծը շրջանում։ Վրաց զինուորականների թշնամանքի դրսեւորումը եղաւ նրանց կողմից կազմակերպուած սադրանքը՝ ՀԱԽի նկատմամբ։ 1918 Օգոստոսին Սոչիի վրայով դէպի Տուապսէ էր անցնում Կուբանի կազակների ջոկատ, որը մինչ այդ մասնակցում էր մոհաջիրների դեսանտի ջախջախմանը եւ հեռացուել էր Արխագիայից՝ մեղադրուելով արխագ խաղաղ բնակչութեան նկատմամբ բռնութիւններ կիրառելու մէջ։ Ոգելից խմիչքներով առատ հիւրասիրութիւնից յետոյ, վրաց պարետը համոզել էր հարբած կազակներին, թէ ՀԱԽը կազմուած է բոլշեւիկներից։ Կատաղած կազակները, պարետի օգնականի ուղեկցութեամբ, ներխուժել էին ՀԱԽի տարածք եւ ծեծի էին ենթարկել ՀԱԽի քարտուղարին ու այդ պահին ներկայ եղած հայերին, խլելով թանկարժէք իրեր։ Այս միջադէպի պատճառները պարզելու նպատակով կազակների հրամանատար գեներալ Մասլուսկուն էր դիմել Սոչիի քաղաքա-

գլուխը։ Պատասխանելով նրան, գեներալը յայտնեց, որ իր ենթակաները թիւրիմացութեան էին մատնուել վրաց ռազմական իշխանութեան ներկայացուցիչների կողմից եւ խնդրելով ներողամտութիւն, շեշտում էր, թէ կազակները հայերի նկատմամբ թշնամանք չունեն։ Իսկ վրացական բանակի պաշտօնական ներկայացուցիչները, ի պատասխան հայերի յետագայ բողոքների, մատնանշելով այս միջադէպը, ասում էին. «Տեսնո՞ւմ էք ինչպէս են վերաբերւում ձեզ կազակները, իսկ դուք մեզանից կրկին դժգոհում էք»։ Այսպիսով, Սոչիի ՀԱԽի անդամները եկան եզրակացութեան, որ, կազմակերպելով սադրանքը, վրաց զինուորականները նպատակ ունէին հայերի մօտ ռուսների նկատմամբ թշնամանք առաջացնել, ինչպէս նաեւ պատրանք ստեղծել տեղի հայերի մօտ, թէ վրացական կառավարութիւնից բացի նրանք այլ պաշտպան չունեն։ Հայերի ահաբեկման նպատակով բազմիցս յիշեցւում էր, որ վրացիներին աջակցում է «գերմանական բռունցքը», այսինքն՝ Ադլէրում տեղակայուած գերմանական զօրամասը[29]։

«Սպիտակ» եւ վրացական զօրքերի բաժանման գծին յարող գօտում քաղաքացիական իշխանութիւնները անզօր էին վերջ տալու անօրինական յափշտակումներին եւ վրացական 2րդ հետեւակային գնդի զինուորների գիշերային յարձակումներին՝ խաղաղ բնակիչների տների վրայ։ Հերթական բողոքից յետոյ, 1918 Հոկտեմբերին յարձակում էր կատարուել Սոչիի ՀԱԽի նախագահ՝ Արամ Յակոբեանի տան վրայ[30]։

Կամայականութիւնը, եւ ոչ միայն հայ բնակչութեան նկատմամբ, կամայ թէ ակամայ դէպի վատն էր փոխել բարեացակամ վերաբերմունքը շրջանում՝ վրացական տիրապետութեան նկատմամբ։ Այս մասին արդէն 1918 Սեպտեմբերի 15ին վարչապետին հաղորդում էր նախարար Եւգենի Գեգեճկորին[31]։ Սակայն վրացական իշխանութիւնները տեղում ամուր յենարան էին գտել շրջանի սոցիալիստական կազմակերպութիւնների կողմից, քանի որ վերջինները Վրաստանի սոցիալ-դեմոկրատական կառավարութիւնը դիտում էին որպէս իրենց հովանաւոր՝ ընդդէմ հակայեղափոխական «Սպիտակ» Կամաւորական Բանակի[32]։

Հայ-վրացական 1918 Դեկտեմբերի զինուած հակամարտութիւնը, բացասաբար ազդեց Վրաստանում հայ բնակչութեան կացութեան վրայ։ 1919 Յունուարի 8ին Վրաստանի ՀԱԽը դիմել էր ՀՀ կառավարութեանը նամակով, որտեղ մասնաւորապէս ասուած էր. «Ռեպրեսիաների համար ահազանգ է հանդիսացել ներքին գործերի մինիստր Ն. Բամիշուիլու գաղտնի շրջաբերականը։ Պատերազմի առաջին օրուանից, ՀՀ ենթականերին ցուցակագրելու անուան տակ, միլիցիայի

եւ յատուկ ջոկատների ներկայացուցիչները սկսել են գիշերային ստուգումները հայերի բնակարաններում, որը վերածուել է իսկական թալանի: Փակուել է հայկական թերթերի մեծ մասը, իսկ մնացածները չեն կարողանում արձագանգել կատարուող յանցագործութիւնների ամենահասարակ փաստերին: Վրաստանի ազգայնական թերթերը կոչ են անում ամենաղաժան պայքար մղել ողջ հայ ժողովրդի դէմ, բռնագրաւել նրանց ունեցուածքը եւ քշել նրանց Վրաստանից: Կատարուող թալանին եւ հակահայկական քաղաքականութեանը «դասակարգային գիտակցութիւն» հաղորդելու նպատակով [նրանք] կամպանիան որակեցին վրաց դեմոկրատիայի ու հայ բուրժուազիայի միջեւ պայքար[33]...հայերի վիճակը դառնում է անտանելի: Փակում են հայերի խանութները եւ կրպակները, թալանը եւ ձերբակալութիւնները հասնում են աննախադէպ չափերի»[34]: *Նոյն օրը Վրաստանի կառավարութեանը ներկայացուած յուշագրում ՀԱՄԸ նշում էր.* «...Վրաց իշխանութեան տակ ապրող կէս միլիոն հայ ազգաբնակչութիւնը զրկուեց ամէն իրաւունքից. նրա պատիւը, ունեցուածքը, ազատութիւնն ու գոյքերը դարձան միլիցիայի եւ յատուկ զօրամասի պաշտօնեաների ազատ քմահաճոյքի առարկայ: ...Այլասերման աստիճանի մասին կարելի է գաղափար կազմել նրանով, որ միլիցիոներները եւ յատուկ զօրամասի պաշտօնեաները, հաստատել էին փրկագնի որոշ սակ՝ 50ից սկսած մինչեւ 50000 ռուբլի, եւ սակաւ չեն դէպքերը, երբ միեւնոյն անձին հերթով դիմում ու դրամ են պահանջում երկու հիմնարկութեան ներկայացուցիչներն էլ, եւ եթէ միամիտը յայտնի, թէ ինքը արդէն տուել է, այդ փաստն ինքնին ամրացնում է նոր պահանջողի իրաւունքը: ...Եւ եթէ այս ամէնը կատարւում էր Թիֆլիսում, դժուար չէ երեւակայել հայերի վիճակը՝ Վրաստանի գաւառներում, որոնք թողնուած են սեփական ճակատագրին եւ վրաց մամուլի հակահայ քարոզչութեան ոգով տոգորուած տեղական վարչութեան ողորմածութեանը»[35]:

1919ի Յունուարին Վրաստանի կառավարութեանը բողոքով դիմել էր Սոչիի Ռուսական Ազգային Խորհուրդը՝ արդէն ռուս ազգութեան մարդկանց հալածելու պատճառով[36]: *Սոցիալիստ-յեղափոխականների Սոչիի Կոմիտէն 1919 Յունուարի 20ին պահանջում էր վրաց իշխանութիւններից՝ քննութիւն կատարել շրջանում բռնութիւնների, թալանների եւ չարաշահումների բազմաթիւ դէպքերի խնդրով*[37]:

Հայաստանի եւ Վրաստանի միջեւ պատերազմի օրերին Սոչիի ՀԱՄԸ հրաւիրուել էր վրացական կառավարութեան ներկայացուցիչ Մ. Խոչոլաւայի եւ շրջանում տեղակայուած Մովսիսեան Ջոկատի հրամա-

նատար գեն. Ղոնիեւի հետ հանդիպման։ Հանդիպման ընթացքում ՀԱԽի անդամները զգուշացուել էին թէ՝ վրացական զօրքերի դէմ տեղի հայերի ելոյթի դէպքում նրանք կը դիտուէին այդ գործի կազմակերպողներ եւ կը պատժուէին գնդակահարութեամբ[38]։ Հայ լիազօրներին ստիպել էին գրութիւն տալ, որ չեն լքի շրջանի տարածքը։ Նման արգելքը տարածուել էր նաեւ ամբողջ հայ բնակչութեան շարժի վրայ։ Այսպիսով հայերի հաւատարմութեան ապահովման, այդպէս էլ շրջանում խաղաղութեան պահպանման պատասխանատուութիւնը դրուել էր ՀԱԽի վրայ եւ դա այն դէպքում, երբ հայերը, չնայած նրանց նկատմամբ թոյլ տուած բոլոր անօրինութիւններին, չէին փոխել սկզբնական հաւատարիմ դիրքորոշումը՝ վրացական իշխանութեան հանդէպ։ Այս կարեւոր վկայութիւնը Ա. Ցակոբեանը տուել էր 1919 Փետրուարի 17ին՝ շրջանում վրացական տիրապետութեան թօթափումից յետոյ[39]։ Վրաց պաշտօնեաների կողմից կիրառուած բոլոր կանխող միջոցառումները նա համարում էր աւելորդ ու անիմաստ, քանի որ ՀԱԽը արդէն դիմել էր բնակչութեանը՝ հանգստութեան հրաւէրով, ինչպէս նաեւ հեռագրել էր ՀՀ կառավարութեանը եղբայրասպան պատերազմին վերջ տալու կոչով[40]։

Սակայն Սոչիի ՀԱԽի եւ հայերի հաշտ դիրքորոշման դիմաց վրաց իշխանութիւնները ոչինչ չարեցին, որ վերջ տան անօրինութիւններին։ Հակառակը, ռազմական իշխանութիւնները կալանաւորում էին բողոքողներին, որպէս սադրիչներ։ Տեսնելով դիմումների անարդիւնաւէտութիւնը, բնակիչները դադարել էին դիմել ՀԱԽին, որի վարկը ընկել էր։ Սոչիի ՀԱԽը 1918 Դեկտեմբերին կոչ էր արել Եկատերինոդարում (այժմ՝ Կրասնոդար) նորաբաց անգլիական միսիային՝ միջամտելու, սակայն՝ անարդիւնք[41]։ Քաղաքացիական իշխանութիւնների անզօրութեան եւ վրաց զինուորականների կամայականութեան աստիճանի մասին վկայում է կառավարութեան ներկայացուցչին կից հայերի գործերով խորհրդական պորուչիկ[42] Նաջարովի հետ տեղի ունեցած միջադէպը։ 1918 Դեկտեմբերին 15 վրացի սպաներ յարձակուել էին նրա վրայ եւ դաժան ծեծի էին ենթարկել միայն այն պատճառով, որ խորհրդականը բազմիցս զեկուցում էր իր պետին հայաբնակ Դէ Սիմոն, Ուչ Դերէ, Նիժնէէ եւ Գոռնոէ Լօо գիւղերում զինուորականների կատարած բռնութիւնների մասին[43]։ 1919 Յունուարին սպանուել էր Պիլենկուոյի (վրաց.՝ Գանթիադի, արխ.՝ Յանդրիպշ) ՀԱԽի նախագահ Վրոյը Տէր-Ղուկասեանը։ Նա յայտնի էր վրացական զինուորականներին եւ իշխա-

նութիւններին դատապարտող բազում ելոյթներով։ Ցանցագործները այդպէս էլ մնացին անյայտ[44]։

1919 Յունուարի 31ին Գոռնոէ Լօ գիւղում տեղի ունեցաւ բախում գիւղացիների եւ թալանով զբաղուող մի խումբ վրաց զինուորականների միջեւ, որի արդիւնքում զինուորականներից մէկը վիրաւորուեց։ Վրաց հրամանատարութիւնը, առանց միջադէպի պատճառը իմանալու, հայերի դէմ ուղղեց պատժիչ ջոկատ, իբր՝ ապստամբութիւնը ճնշելու։ Գիւղացիները թոյլ չտուեցին զօրամասին մուտք գործել գիւղ եւ դիմադրեցին։ Նրանք իշխանութիւններից պահանջում էին քննութիւն բացել, քանի որ համոզուած էին, որ զինուորները ապատեղեկացրել էին իրենց հրամանատարութեանը՝ Յունուարի 31ի բախման իրական պատճառների մասին։ Սակայն դա տեղի չունեցաւ եւ Փետրուարի 1ից գիւղում սկսուեց մարտ։ Գիւղացիների դէմ, որոշ տեղեկութիւններով, նոյնիսկ ուղղուել էին հրանօթներ[45]։ Միաժամակ տարածուել էին լուրեր - որոնք յետագայում չհաստատուեցին - իբր՝ մի քանի հարիւր զինուած հայեր շարժւում էին դէպի Աղլէր[46]։ Չկարողանալով կոտրել ապստամբների մարտական կամքը, զինուորականները ներխուժել էին հարեւան Ուչ Դերէ աւանը եւ դուրս էին քշել նրա հայ բնակիչներին՝ դէպի Գոռնոէ Լօ գիւղի մատոյցները։ Գիւղացիներին որպէս կենդանի վահան օգտագործելով, զինուորականները փորձում էին մօտենալ ապստամբ հայերի դիրքերին։ Սակայն դիմադրողները այնպէս էին կազմակերպել մարտը, որ խաղաղ բնակչութիւնը չէր տուժել եւ ցրուել էր յարակից անտառում[47]։ Զինուորականների ձեռքում մնացած Ուչ Դերէի երկու բնակիչ՝ Սեդրակ Թագմազեանը եւ Գարեգին Գրբաչեանը յայտարարուել էին պատանդ, սակայն դիրքերից եռդարձի ճանապարհին, առանց որեւէ պատճառի սուինահարուել էին ուղեկալի կողմից[48]։ Կատաղած զինուորները սպանել էին նաեւ ճանապարհին նրանց հանդիպող Կուբանակոյէ գիւղի տարէց բնակիչ Համբարձում Դաւլաշեանին[49]։

Անհանգստացած՝ դէպքերի զարգացումներով, ՀԱԽի անդամները Փետրուարի 2ին պատրաստել էին շրջաբերական նամակ, եւ յղել շրջանում գործող հասարակաքաղաքական կազմակերպութիւններին, Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչութեան[50] եւ Վրաստանի ՀԱԽին[51]։ Ա. Յակոբեանը գրում էր, որ Սոչիի ՀԱԽը բազմիցս դիմել է շրջանում Վրաստանի ներկայացուցչին՝ բողոքելով վրացական Մովափնեայ Ջոկատի զինուորականների կատարած բռնութիւնների եւ թալանների դէմ։ Բողոքները, սակայն, անարդիւնք էին մնացել։ Միաժամանակ, չցանկանալով սրել յարաբերութիւնները վրաց իշխանութիւնների հետ, Յակոբ-

եանը յայտնում էր, թէ կատարուածը անպատասխանատու անձանց գործունէութեան հետեւանք է, որոնք գործում էին առանց իշխանութիւնների գիտութեան՝ եւ՝ կամքին հակառակ։ Անդրադառնալով Գառնոէ Լօ գիւղի բնակիչների ելոյթին, Սոչիի ՀԱԽը յայտնում էր նրանց անունից, որ գիւղացիները չունեն որեւէ հակասութիւն՝ վրացական իշխանութիւնների հետ եւ պաշտպանւում էին միայն հրոսակ զինուորների դէմ։ Հայերի միակ պահանջն էր՝ նշանակել անկողմնակալ յանձնաժողով դէպքերի քննութեան նպատակով։

Ստեղծուած դրութիւնը Սոչիի ՀԱԽը բնութագրում էր որպէս աղէտ։ Կառավարութեան ներկայացուցչի հետ համատեղ իրականացուած ՀԱԽի միջոցառումները՝ բախման դադարեցման ուղղութեամբ, անարդիւնք մնացին եւ այդ պատճառով ՀԱԽը խնդրում էր հասցէատէրերին՝ միջամտել ու պահանջել Վրաստանի իշխանութիւններից անյապաղ վերջ տալ մարտական գործողութիւններին՝ եւ քաշելով զօրքերը հայկական գիւղի մատոյցներից[52]։ Ելոյթը ՀԱԽը դիտում էր որպէս գիւղացիների ինքնապաշտպանական կռիւ[53]։ Փետրուարի 3ին Սոչիի ՀԱԽը անյապաղ միջամտութեան խնդրանքով դիմել էր Այսրկովկասում բրիտանական հրամանատարութեանը՝ խաղաղ միջոցներով միջադէպի վերացման համար։ ՀԱԽը մտահոգութիւն էր յայտնում, որ մասնակի ելոյթը Գառնոէ Լօ գիւղում կը վերածուի ընդհանուր բախման։ Դիմումի բովանդակութիւնը անգլիացիները հեռախօսակապով ազդարարել էին Վրաստանի կառավարութեանը[54]։

1919 Փետրուարի 4ին Սոչիի ՀԱԽի պահանջին արձագանգեց սոցիալիստ-յեղափոխականների Շրջանային Կոմիտէն, որը իր յայտարարութիւնում պահանջում էր անյապաղ նշանակել քննչական յանձնաժողով եւ պատասխանատուութեան կանչել մեղաւորներին։ Միաժամանակ, Կոմիտէն շեշտում էր, որ բռնութիւնների եւ թալանների դէմ ելած գիւղացիներին «իշխանութիւնները ճնշում են ցարական ժամանակների պատժիչ արշաւանքները յիշեցնող դաժանութեամբ»[55]։ Փետրուարի 5ին Սոչիի Ուկրաինական Գրոմադայի (Միութեան) նախաձեռնութեամբ անցկացուեց շրջանի հասարակաքաղաքական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հաւաք, որը որոշեց. «1. Պահանջել դադարեցնել ռազմական գործողութիւնները եւ բռնութիւնները՝ խաղաղ բնակչութեան դէմ; 2. Ընտրել յանձնաժողով երեք անդամից՝ տեղի իշխանութիւնների հետ միասին քննելու բռնութիւնների բոլոր դէպքերը՝ ինչպէս զօրքերի, այդպէս էլ ցածրադիր վարչակազմի կողմից կատարուած; 3. Շտապ հեռագրով առաջարկել Թիֆլիսի

անգլիական միսիային՝ պատուիրակութիւն յղել Սոչի; 4. Պատուիրակութեան առջեւ հարց բարձրացնել հանրաքուէի մասին, որպէսզի բնակչութիւնը առանց զօրքերի եւ վարչակազմի որեւէ ճնշման կարողանայ արտայայտուել տեղական իշխանութեան կազմակերպման, շրջանի քաղաքական ու տնտեսական ճակատագրի մասին...; 6. Դուրս բերել զօրքերը»[56]։ *Փաստաթղթի բովանդակութիւնը որոշուել էր յայտնել նաեւ Կամաւորական Բանակի շտաբին։ 32 ձայն քուէարկել էր որոշման օգտին, իսկ դէմ էին արտայայտուել տեղի սոցիալ-դեմոկրատների ղեկավարները (Իգմայլով, Ցանդէր)։ Շրջանային Վրացական Ազգային Խորհրդի (ՎԱԽ) ներկայացուցիչները (Խոփերիա, Զիփաձէ) ձեռնպահ մնացին*[57]։

Տեղի ՎԱԽը յղել էր պատասխան Սոչիի ՀԱԽի Փետրուարի 2ի շրջաբերականին, թէ՝ «Վրաց հասարակութիւնը արտայայտում է իր ափսոսանքը որոշ վրաց զինուորների կողմից կատարած էքսցեսների վերաբերեալ։ Միաժամանակ, վրաց հասարակութիւնը պատուիրակների միջոցով բարեխօսել է բարձրագոյն ռազմական եւ քաղաքական իշխանութիւնների առջեւ՝ հայ բնակչութեան եւ զօրքերի միջեւ հակամարտութիւնը անյապաղ վերացնելու մասին։ Վրաց հասարակութիւնը յոյսով է, որ բարեկամութիւնը՝ հայ եւ վրաց եղբայր ժողովուրդների միջեւ, չի խախտուի եւ առաջացած թիւրիմացութիւնները ու առանձին մութ անձանց սադրանքները յետագայում կը կանխուեն ոգով բարեկամ երկու ժողովուրդների միացեալ ուժերով»[58]։ *Ցիշեալ նամակի կրկնօրինակը յղուել էր մերձսեւծովեան երկրամասում Վրաստանի կառավարութեան ներկայացուցիչ Մուխրան Խոչոլաւային։*

Փետրուարի 6ին կառավարութեան քարտուղարութիւնում սղագրել էին Խոչոլաւայի զեկուցումը։ Նա յայտնում էր, որ Փետրուարի 3ից դէպքերը քննելու նպատակով իր գլխաւորութեամբ սկսեց գործել յատուկ յանձնաժողով[59]։ *Նշուած են երկու զոհ հայերից եւ վիրաւորներ՝ վրացական զինուորականների շարքերում։ Չնայած, որ սկզբնական տեղեկութիւններով Խոչոլաւայի մօտ ստեղծուել էր իրական ապստամբութեան տպաւորութիւն, նա հաղորդում է հակամարտութիւնը ի վերջոյ խաղաղ միջոցներով վերացնելու մասին։ Վերլուծելով ելոյթի պատճառները, նա նշում է շրջանային կոմիսար Զնելաձէի թեթեւամիտ վերաբերմունքը տեղի բնակչութեան կարիքներին եւ պահանջներին։ Վրաց բարձրաստիճան պաշտօնեան չէր բացառում իր համար անյայտ նաեւ որեւէ այլ ոյժի չար կամքը։ Միաժամանակ նա վկայում է.* «Ես անձամբ տեսել եմ հետեւանքները մի շարք անբոյլատրելի գործերի,

յափշտակումների եւ կոպիտ վերաբերմունքի՝ բնակչութեան նկատմամբ [վրաց] զինուորականների կողմից»։ *Խոչորաւայի գեկուցագրում չկայ որեւէ մեղադրանք տեղի հայերի վարքագծի վերաբերեալ եւ փաստաթուղթը բարեացակամ ոգով է ներշնչուած նրանց նկատմամբ*[60]։ *Վրաստանում ՀՀ դեսպանորդը Երեւան գեկուցեց Սոչիի հայերի ապստամբութեան պատճառների մասին. թէ՝ ապստամբութիւնը ուղղուած էր անկարգութիւն անող վրացական զօրքերի դէմ, որի հետեւանքը եղաւ - նրա կարծիքով - Կամաւորական Բանակի կողմից շրջանի գրաւումը։* «Վրաց իշխանութիւնների թշնամական վերաբերմունքը՝ դէպի այդ շրջանի հայերը, ոչ ոքի մէջ կասկած չպիտի յարուցի»[61], *գրում է դեսպանորդը։*

Վրաստանի կառավարութեան ոտնձգութիւնները բախման բերեցին Վրաստանին՝ Ռուսաստանի հարաւում հզօրացող «Սպիտակ Շարժման» հետ։ Ինչպէս գրում էր Կամաւորական Բանակի գեներալ Ալեքսանդր Լուկոմսկին. «Վրաստանի համար Սոչիի շրջանը ունէր հսկայական նշանակութիւն՝ որպէս գօտի, որն առանձնացնում էր Կամաւորական Բանակը Սուխումի շրջանից։ Վրաստանի կառավարութիւնը մտավախութիւն ունէր, որ Կամաւորական Բանակի անմիջական հարեւանութիւնը կը տանի Աբխազիայի տարանջատմանը Վրաստանից»[62]։ 1919 *Փետրուարի 6ին Կամաւորականները Սոչիից դուրս քշեցին վրացական զօրքերը, ապա նուաճեցին Գագրայի տեղամասը։ Առաջացաւ Սոչիի ռազմաճակատը, որը Կամաւորական Բանակի կողմից պաշտպանւում էր նաեւ 1500 հայերից կազմուած զօրամասով*[63]։ *Վրաց իշխանութիւնների կարծիքով Կամաւորական Բանակի հետ ընդհարման պատճառը հայերն էին*[64]։ *Կամաւորականների յարձակման անցնելու օրը վրացական իշխանութիւնները Սոչիում ցրել էին պարեկային խմբեր, նրանց յանձնարարելով ձերբակալել ՀԱԽի անդամներին, որպէս այդ գործի անմիջական յանցաւորներ*[65]։ *Որ դա այդպէս չէր՝ վկայում է 1919 Փետրուարի 19ի Սոչիի ՀԱԽի նամակը Վրաստանի ՀԱԽի նախագահութեանը։ Նամակում յստակօրէն ասուած էր, որ* «Ազգային Խորհուրդը մինչեւ վերջին պահը մնացել է հաւատարիմ [Վրաստանի կառավարութեանը] եւ ոչ մի կապ չի ունեցել Կամաւորական Բանակի հետ»[66]։ *Փաստերը վկայում են, որ հայ բնակչութեան մասնակի ելոյթը չէր կարող պատճառ դառնալ Սոչիի եւ Գագրայի գրաւմանը։ Կամաւորականների եւ Վրաստանի բախման հիմքում ընկած էր տարածքային վէճը։* 1918 *Սեպտեմբերին նախարար Գեգեճկորին համոզում էր վարչապետ Նոյ Ժորդանիային՝ օգտուել յարմար պահից*

եւ պաշտօնապէս միաւորել Սոչիի շրջանը Վրաստանին, նշելով, որ հակառակ վարքագիծն աններելի է եւ նոյնիսկ յանցանք կը լինի վրաց կառավարութեան համար։ Միաժամանակ նախարարը շեշտում էր, որ շրջանի միացումը փաստի առջեւ կը դնի Կամաւորական Բանակի հրամանատարութեանը[67]։ Նոյն ժամանակ, կառավարութեան ներկայացուցիչ Անջափարիձէն զգուշացնում էր ռազմական նախարարին, թէ շրջանին տիրելու ցանկութիւնը կը յանգեցնի լուրջ բախման։ Նրա կարծիքով տարածքը կարելի էր պահել միայն գերմանացիների օժանդակութեամբ, որոնց զօրամասը 1918ին գտնւում էր Ադլէրում։ Հակառակ պարագայում Անջափարիձէն առաջարկում էր ուշադրութիւնը սեւեռել Վրաստանի պատմական սահմանի վրայ[68]։ Յետագայում, անտեսելով դաշնակից Գերմանիայի պարտութեան փաստը եւ բրիտանական զօրքերի հրամանատարութեան ոչ-նպաստաւոր դիրքորոշումը[69], վրացական իշխանութիւնների եւ տեղի սոցիալիստական կազմակերպութիւնների ջանքերով 1918 Դեկտեմբերին հրաւիրուած Սոչիի շրջանի գիւղացիութեան համագումարը կողմ քուէարկեց Վրաստանի կազմում լինելու առաջարկին, թէպէտ ժամանակաւոր՝ մինչեւ Ռուսաստանի Դեմոկրատական Դաշնային Հանրապետութեան ձեւաւորումը[70]։

Սոչիի ՀԱՄի կարծիքով, Վրաստանի կառավարութեան ներկայացուցիչները եղան սնանկ եւ չկատարեցին խոստումը՝ դատի յանձնել բռնութիւններ գործողներին։ Այդ իսկ պատճառով, ՀԱՄի տեսակէտից, նրանք ոչ միայն չկարողացան անիշխանութեանը վերջ տալու առաքելութիւն ունենալ, այլեւ ինքները տարածում էին շրջանում «անիշխանութիւն»։ Ելնելով եղածից, Սոչիի ՀԱՄը շահագրգիռ կողմերին առաջարկում էր այլեւս չենթարկել Սոչիի շրջանը Վրաստանի իշխանութեանը եւ միջոցներ գտնել Արխազիայի հայ բնակչութեան տարրական իրաւունքների պաշտպանման համար[71]։

Գագրայի տեղամասում Կամաւորականների տիրապետութեան օրերին, ումն Դերենիկեան[72] հակավրացական թեւին պատկանող արխազ գործիչների հետ գաղտնի դաշինք էր կնքել, իր ասելով՝ «Հայ եւ արխազ ազգութիւնների փոխյարաբերութիւնները կանոնաւորելու համար»[73]։ Տուեալ փաստին ՀՀ Արտաքին Գործերի Նախարարութիւնում (ԱԳՆ) բացասական էին վերաբերուել եւ Դերենիկեանի գործունէութիւնը որակել էին «ինքնագլուխ»։ Բացի այդ, ԱԳՆում կարծում էին, թէ. «Շնորհիւ նրա ակտիւ գործունէութեան, որը միշտ պարզ կերպով ուղղուած է եղել վրացիների դէմ, հայ-վրացական յարաբերութիւնները այս շրջանում դարձել են սոսկալի թշնամական եւ ստեղծուել է մի

շատ պարարտ հող՝ պրովոկացիայի համար»։ *Այսպիսով, Դերենիկեանը համարուեց* «վնասակար եւ ինքնակոչ անձնաւորութիւն, որի վնասակար ազդեցութիւնը հայ գաղութի վրայ Սոչիում անհրաժեշտ է չեզոքացնել»[74]։ *Պարզ է, որ ՀՀ կառավարական շրջանակները ստիպուած աչք փակելով բռնութիւնների բազմաթիւ դէպքերի, միաժամանակ խիստ բացասական էին վերաբերւում հայերի հակավրացական գործունէութեան որեւէ մասնակցութեանը։ Վրաստանի հայութեան վիճակի բարելաւումը ՀՀ իշխանութիւնները տեսնում էին բանակցութիւնների եւ բարիդրացիական յարաբերութիւնների հաստատման ճանապարհով։*

Ինչպէս գրում էր Լուկոմսկին. «Սոչիի շրջանում վրացական իշխանութեան թօթափումից յետոյ թիւրիմացութիւնները շարունակւում էին հարեւան Սուխումի շրջանում՝ հայերի եւ աբխազների նկատմամբ վրացական իշխանութիւնների վերաբերմունքի պատճառով»[75]։ *Երկու կողմերը՝ ե՛ւ վրացական, ե՛ւ կամաւորական, միջնորդութեան խնդրանքով դիմում էին Այսրկովկասում տեղակայուած բրիտանական բանակի հրամանատարութեանը։ 1919 Մարտի 11ին Անտոն Դենիկինը*[76] *նամակ էր յղել Բրիտանական Ռազմական Միսիայի պետ գեներալ Բրիգգին, որտեղ մասնաւորապէս ասուած է.* «Ինձ դիմել էին Սոչիի շրջանի հայկական ազգային միութեան պաշտօնական ներկայացուցիչները խնդրանքով՝ պաշտպանել Սուխումի շրջանի հայ բնակչութիւնը... վրացական զօրքերի բռնութիւններից[77]...Վրացական զինուորական իշխանութիւնները ռազմատուգանք են դրել Սուխումի շրջանի Գուդաուտայի տեղամասի հայաբնակ գիւղերի վրայ... Բնակիչները... չունէին միջոցներ՝ կատարելու իրենց առջեւ դրուած պահանջները։ Փետրուարի 23ին վրացական զօրքերը, շրջապատելով գիւղերը, սկսեցին խաղաղ բնակչութիւնը գնդակոծել հրանօթներից եւ գնդացիրներից... Խնդրում եմ ... հասցնել ... իմ բողոքը՝ անպաշտպան հայ բնակչութեան նկատմամբ բռնութիւնների վերաբերեալ, եւ խնդրում եմ գործադրել եռանդուն ճնշում՝ վրացական կառավարութեան վրայ՝ վայրագութիւններին վերջ տալու համար»[78]։ *Վրաց պատմաբանները կեղծարար եւ սադրանք են համարում Դենիկինի կողմից հայերի եւ աբխազների շահերի պաշտպանութեան առաքելութիւնը, որի նպատակն էր արդարացնել վերջինիս գաւթողական քաղաքականութիւնը Վրաստանի նկատմամբ*[79]։ *Վրաց հեղինակի կարծիքով բնակչութիւնից անցանկալի բռնագրաւումները - որոնք զանգուածների բնական դժգոհութիւն էին առաջացնում - պայմանաւորուած էին*

Վրաստանի տարածքային ամբողջականության եւ իրաւակարգի պաշտպանության ուղղութեամբ գործադրուած միջոցառումներով[80]։

1919 Ապրիլին վրացական զօրքերը անցան հակայարձակման եւ ետ խլեցին Գագրայի տեղամասը։ Բրիտանական հրամանատարութեան նախաձեռնութեամբ Գագրայի տեղամասում կողմերի միջեւ հաստատուել էր «չէզոք գօտի»։ Հայաբնակ Պիլենկուս աւանը յայտնուեց սահմանագծին, կիսուելով՝ «չէզոք» եւ «վրացական» մասերի[81]։ Ինչպէս տեղեկացնում էր ՀՀ հիւպատոսը Սուխումում, Գագրայի տեղամասի հայ բնակչութիւնը Կամաւորների եւ վրացական զօրքերի բախումների ժամանակ ենթարկուել էր սնանկացման, քանի որ զինուորները սնում էին հայերի հաշուին։ Հիւպատոսի վկայութեամբ տեղամասի հայերի վիճակը աննկարագրելի ծանր էր եւ դիտորդի վրայ ճնշող տպաւորութիւն էր թողնում[82]։ Վրաց զինուորականները կասկածում էին հայերին՝ Կամաւորականներին աջակցութեան գործում եւ վրէժ էին լուծում նրանց նկատմամբ[83]։ Մէկ այլ զեկոյցում, հիւպատոսը ԱԳ նախարարին գրում է, որ վրացական բանակը հրով եւ սրով անցաւ Գագրայի տեղամասով, օգտագործելով այն պատրուակը, որ հայերն էին հրաւիրել Կամաւորականներին Սոչիի շրջան։ Հիւպատոսը ոչինչ չի ասում որոշակի դէպքերի մասին, նշելով միայն, որ վրացական ռազմական իշխանութիւնների անօրինութիւնները այս տեղամասում հնարաւոր չէ նկարագրել։ Նա յայտնում է, որ Աբխազիայում Վրաստանի կառավարութեան ներկայացուցիչ Իսիդոր Բամիշուիլու խոստովանութեամբ՝ առանց վրաց իշխանութիւնների օգնութեան հնարաւոր չէր վերացնել հասցուած կորուստը։ Այդպիսով՝ չէր ժխտուում մնասը[84]։

1919 Մարտի 16ին, Սուխումի շրջանի 170 հայերի ստորագրութիւններով վաւերացուած նամակ է ուղարկուում Թիֆլիսում ՀՀ դեսպանատուն։ դիմողները յայտարարում էին իրենց Հայաստանի հպատակներ եւ բողոքելով անպաշտպան լինելուց, խնդրում էին ներկայացուցչութիւն բացել Սուխումում[85]։ 1919 Հոկտեմբերի 28ին ՀՀ վարչապետ Ալեքսանդր Խատիսեանը, նաեւ որպէս արտգործնախարար ստորագրում է շրջաբերական նամակ, որտեղ կարեւորում է հիւպատոսութիւնների բացման հարցը, քանի որ ՀՀ կառավարութիւնը տեղեակ չէր հայ գաղութների կեանքի մասին[86]։ 1919 Յունիսի 25ին, Վրաստանում ՀՀ ներկայացուցիչ Լեւոն Եւանգուլովի զեկուցագրում ԱԳՆին առաջարկւում է հպատակութեան հարցը վճռելիս նկատի առնել այն հանգամանքը, որ Սուխումի եւ Սոչիի հայերի կողմից Հայաստանի քաղաքացիութիւն ըն-

դուներու պարագայում, փաստը, յամենայնդէպս, կ՝օգտագործուի Վրաստանի կառավարութեան կողմից՝ հայերին հողային սեփականութեան իրաւունքից զրկելու նպատակով, իբրեւ օտարների[87]։ Ինչպէս յայտնի է դառնում 1919 Սեպտեմբերի 26ի Եւանգուլովի զեկուցագրից, նրան այցելել էր Սուխումի Շրջանային ՀԱԽի անդամ Խ. Աւդալբեկեանը եւ պնդել, որ հիւպատոսարանի բացումը Սուխումում անհրաժեշտ չէ, քանի որ կարող է փչացնել յարաբերութիւնները վրաց իշխանութիւնների հետ։ Աւդալբեկեանի կարծիքով ՀԱԽը ոչ միայն հոգում էր գաղութի կարիքների որոշ մասը, այլեւ կարող էր վարել հիւպատոսական գործ[88]։ Սակայն 1919 Օգոստոսի 1ին Եւանգուլովը ՀՀ կառավարութեան անունից դիմել էր Վրաստանի իշխանութիւններին խնդրանքով, որտեղ ասուած է. «Սուխումի շրջանում բնակւում են մեծ թուով նախկին թուրքահպատակ հայեր։ Նրանց շահերի պաշտպանութեան համար Հայաստանի կառավարութիւնը նպատակայարմար է գտնում հիմնել հիւպատոսարան Սուխում քաղաքում՝ հիւպատոսի նստավայրով։ Խնդրում եմ տեղեկացնել՝ Վրաստանի կառավարութեան կողմից այս առաջարկի իրականացումը կարո՞ղ է հանդիպել որեւէ խոչընդոտի»[89]։ Արդէն Օգոստոսի 7ին Վրաստանի կառավարութիւնը դրական որոշում է կայացնում[90]։ 1919 Նոյեմբերի 15ին Եւանգուլովը առաջարկում է ՀՀ ԱԳՆին բացել հիւպատոսարան նաեւ Սոչիում՝ հիմնաւորելով դիմումը, թէ՝ ժամանակին ներկայացուցչութիւն ունենալու պարագայում համապատասխանօրէն կը պաշտպանուէին հայերի շահերը եւ կը կանխուէր նրանց ապստամբութիւնը։ Այժմ, Եւանգուլովի կարծիքով, ներկայացուցիչը պէտք է նպաստէր հայերի չէզոքութեանը եւ հայրենադարձութեանը[91]։ Սակայն ՀՀ արտգործնախարարի հրահանգով Սոչիի շրջանը ընդգրկուեց Սուխումի հիւպատոսարանի գործունէութեան գօտում[92]։ Եւանգուլովի առաջարկութեամբ, Նոյեմբերի 1ից[93] ՀՀ ԱԳՆն Սուխումում հիւպատոս նշանակեց Թիֆլիսի ներկայացուցչութեան խորհրդական Վաղարշակ Սահակեանին։

Հասնելով Սուխում, Սահակեանը տեղեկացնում էր իր նախարարին, որ Վրաստանի կառավարութեան իշխանութիւնը Արխազիայում վերջնականօրէն չի հաստատուել, քանի որ պայքար է ընթանում երկրամասի լայն ինքնավարութեան կողմնակիցների եւ վրաց իշխանութիւնների միջեւ, որի պատճառով կառավարման բնագաւառում տիրում է խառնաշփոթ[94]։

1919 Փետրուարին ընտրուել էր Արխազիայի Ժողովրդական Խորհուրդը (ԱԺԽ), որն էլ ձեւաւորեց տարածքային գործադիր իշխանու-

թիւն՝ Կոմիսարիատ անուանումով։ Սուխումի հայութեան գերակշռող մասը, համարուելով թուրքահպատակ, գուրկ էր ընտրութիւններին մասնակցելու իրաւունքից։ Զայնի իրաւունք ունեցողները տուեցին այն Վրաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութեանը, որի ցուցակով ԱԺԽ անդամ ընտրուեց Սուխումի ՀԱԽի նախագահ Խաչատուր Աւդալբեկեանը։ Վրաց հեղինակները շեշտում են նրա եռանդուն աջակցութիւնը՝ Վրաստանի կառավարութեան քաղաքականութեանը[96]։ Սուխումի շրջանում գործող ՀԲԴ Տեղական Կոմիտէն որեւէ կերպ չարտայայտեց իր դիրքորոշումը[96]։ Երկրամասի վերջնական իրաւական կարգավիճակը պէտք է որոշէր Վրաստանի ապագայ սահմանադրութիւնը եւ, որպէս վերջինիս գումարելին՝ «Ինքնավար Աբխազիայի Կանոնակարգը»։ ԱԺԽն ենթադրւում էր որպէս օրէնսդրական մարմին, սակայն մինչեւ ինքնակառավարման մասին կանոնակարգի հաստատումը, նրա լիազօրութիւնների շրջանը չէր սահմանուած։ Այդ իսկ պատճառով ԱԺԽն ունէր ներկայացուցչական ֆունկցիա։ Ժամանակակիցների վկայութեամբ ե՛ւ ԱԺԽի, ե՛ւ Կոմիսարիատի դերը ձեւական էր. իրական իշխանական լծակները գտնւում էին վրացական զինուորական հրամանատարութեան ձեռքում։ Թիֆլիսի մամուլը կասկածի տակ էր առնում Աբխազիայի ինքնավարութեան անքակտելիութեան մասին Վրաստանի կառավարութեան հաւաստիացումները[97]։ 1920 Յունուարի 21ին ԱԺԽին բողոքով դիմել էին Գագրայի տեղամասում բնակուող հայերի պաշտօնական ներկայացուցիչները. «Վրաց զինուորականները,- գրում էին նրանք,- գիշերով յարձակւում են խաղաղ բնակիչների վրայ, եւ սպառնալով գնդակահարել, դրամ են պահանջում։ Ստանալով մի քանի հազար ռուբլի, հեռանում են, հակառակ դէպքում՝ սպանում են... Շարքայինների եւ սպաների վերաբերմունքը հայերի նկատմամբ վերին աստիճանի արհամարհական է եւ սպառնացող»[98]։ Զեկուցագրերից մէկում Սահակեանը առաջարկում է Բամիչուիլու առջեւ բարձացնել Գագրայում փոխհիւպատոս ունենալու հարցը, քանի որ արխազական իշխանութիւնների ազդեցութիւնը շրջանում աննշան է[99]։

Հիւպատոսութեան գործունէութեան առաջին իսկ օրից կարեւորւում էին մի շարք հարցեր, ինչպէս՝ հայրենադարձութեան, Սուխումի շրջանի հայերի քաղաքացիական պատկանելիութեան եւ նրանց զօրակոչի հարցերը, որոնց լուծումը բարդանում էր հիւպատոսի եւ տեղի ՀԱԽի միջեւ անբարեացակամ յարաբերութիւններով։ Նոյնիսկ նրանց անհամաձայնութիւնները տարածւում էին Սուխումի շրջանում բնակ-

ուող հայերի թուի շուրջ. Սահակեանը նշում է 25000[100], իսկ ՀԱԽը՝ 30000[101]։

1920 Մարտի 2ին հիւպատոսը կազմում է Աբխազիայում հայերի քաղաքական եւ տնտեսական իրավիճակի մասին հաշուետուութիւն։ Նա նշում է, որ Վրաստանի կառավարութեան կողմից ծխախոտի առեւտրի պետական մենաշնորհի հաստատումից յետոյ, հայերը կարծում էին, որ Աբխազիայում այլեւս ապրել հնարաւոր չէ եւ պահանջում էին իրենց տեղափոխել Հայաստան։ Հակառակ դէպքում՝ սպառնում էին արտագաղթել ցանկացած այլ երկիր[102]։ 1920ի ամռանը, Թիֆլիսում գտնուող ԱԺԽի պատուիրակութիւնը բողոքում էր Վրաստանի վարչապետ Ժորդանիային, թէ՝ ծխախոտային մենաշնորհը գիւղացիների միջավայրում ուժգին բողոք է առաջացրել եւ կործանել այս գիւղատնտեսական կուլտուրայի մշակումը[103]։ Եւ իրօք, եթէ 1914ին ծխախոտի տնկաստանների ընդհանուր տարածքը կազմում էր 14325 հեկտար, ապա 1920ին՝ միայն 1311[104]։

Միւս հարցը, որը յուզում էր բնակչութեանը, 21 տարին լրացած հայ երիտասարդների զօրակոչն էր Վրաստանի բանակ։ Այս որոշումը առաջացրեց տեղի հայերի զայրոյթը։ Սա տեղի ունեցաւ այն պարագայում, երբ աբխազները Վրաստանի կառավարութեան կողմից ազատուած էին զօրակոչից եւ կարող էին ծառայել բանակում՝ կամաւոր[105]։ Հիւպատոսարանի բացումից անմիջապէս յետոյ 700 հայ ընտանիք ձեւակերպեց Հայաստանի քաղաքացիութիւն[106]։ Թիֆլիսում ընթացող բանակցութիւններում ՀՀ պատուիրակութիւնը դիմեց վրացական կողմին եւ նրա իշխանութիւնները հրաժարուեցին ուժային գործօնից։ Կալանքից ազատուեցին զօրակոչից խուսափողները, բանակի շարքերից զօրացրուեցին Վրաստանի քաղաքացիութիւն չունեցող հայերը։ Միաժամանակ, Սուխումի հիւպատոսը հանդէս եկաւ միջնորդութեամբ՝ զինակոչը չտարածել շրջանում բնակուող Հայաստանի քաղաքացիների վրայ՝ մինչեւ իրենց հայրենիք տեղափոխուելը[107]։ 1919 Դեկտեմբերի 9ի պատասխան նամակում նշուած է, որ թէպէտ Ռազմական նախարար Ք. Արարատովը անցանկալի էր համարում իրականացնել զօրակոչը Հայաստանի սահմաններից դուրս, միաժամանակ նա նպատակայարմար էր գտնում առաջարկել երիտասարդներին, որոնք հանդիսանում էին ՀՀ զինակոչիկներ, իրենց հաշուին մեկնել Հայաստան։ Հակառակ դէպքում նրանք կը համարուէին Վրաստանի քաղաքացի եւ պէտք է ծառայէին տեղում[108]։

Սպիտակ Բանակի հրամանատարութեան կարգադրութեամբ, վերջինիս տիրապետութեան ներքոյ յայտնուած Սոչիի եւ Գագրայի տարածքում, 1919 Ապրիլի 12ից յայտարարուել էր զօրահաւաք։ Տեղի ռուս գիւղացիները, չցանկանալով ներքաշուել քաղաքացիական պատերազմին, իրենց հաւաքում ընդունել էին բանաձեւ, որը մերժում էր հրամանը[109]։ Հայերը, որոնք ողջունում էին «Սպիտակների» տիրապետութիւնը, որպէս ազատութիւն՝ վրացական լծից, համերաշխ չեղան ռուս գիւղացիների հետ[110]։ Այն պարագայում, երբ ռուս գիւղացուն նոյնիսկ գնդակահարում էին դասալքութեան համար, համշէնահայ բնակչութիւնը բաւական թուով կամաւորներ տուեց։ Արդիւնքում, Կամաւորական Բանակի կազմում գոյացաւ Հայկական Զօրամաս[111]։ Վերջինս գործել է վրաց զօրքերի դէմ Սոչիի ռազմաճակատում[112]։

Հայերի մասնակցութիւնը վրաց բանակի դէմ կռիւներին՝ ճիշտ չէ ընկալել որպէս ազգամիջեան բախում, քանի որ յայտնի է տեղի վրաց եւ համշէնահայ համայնքների միջեւ բարիդրացիական յարաբերութիւնների փաստը։ Զօրամասի ձեւաւորումը հարկաւոր է դիտել որպէս բողոքի դրսեւորում՝ վրացական իշխանութիւնների սխալ կառավարման դէմ՝ երբ համշէնահայ համայնքն այլեւս չէր ցանկանում յայտնուել Վրաստանի կազմում։ Խուսափելով վրաց իշխանութիւնների կողմից աւելորդ մեղադրանքներից, Սուխումի շրջանի ՀԱԽը հայկական ռազմիկներին հռչակեց զօրամասի եկուորներ[113]։ 1919 Նոյեմբերին Սուխումի ՀԱԽը դիմել էր ՀՀ Թիֆլիսի դեսպանորդին խնդրելով ջանք գործադրել Հայկական Զօրամասը ռազմաճակատից հեռացնելու ուղղութեամբ, քանի որ նրա մասնակցելը կամաւորականների եւ վրաց բանակի միջեւ բախումներում, նիւթ էր տալիս Աբխազիայի հայերի դէմ սադրանքներ կազմակերպելու։ Որպէս հետեւանք սրւում էին յարաբերութիւնները վրաց իշխանութիւնների հետ, ինչը լուրջ վատացնում էր Սուխումի շրջանում հայերի վիճակը, որոնք ՀԱԽի պնդմամբ, ցանկանում էին հանգիստ ու խաղաղ ապրել իրենց հարեւանների հետ։ ՀԱԽի կարծիքով զօրամասը հայերի որեւէ շահին չէր ծառայում եւ նրա հեռանալուց յետոյ շրջանի հայութեան դրութիւնը կը բարելաւուէր[114]։

1919 Նոյեմբերի 25ին Վրաստանում ՀՀ ներկայացուցչութեան ռազմական կցորդը հաղորդում էր իր կառավարութեանը, որ Դենիկինը համաձայնութիւն է տուել Սպիտակ Բանակում ծառայող մի քանի հազար հայերի ՀՀ տեղափոխութեանը։ Բացի այդ, ինչպէս հաւաստիացնում էր Եկատերինոդարում գտնուող Ռուսաստանի Հարաւային Ռազմական Ուժերի գլխաւոր հրամանատարութեան եւ «Յատուկ խորհր-

դակցութեանը»[115] կից ՀՀ ներկայացուցիչ Հ. Սաղաթելեանը, Դենիկինը խոստանում էր զէնքը թողնել հայ ռազմիկներին եւ նրանց ապահովել զինամթերքով։ Իսկ Եւանգուլովը հաղորդում էր, որ Վրաստանի կառավարութիւնը նրանց համար չի ստեղծի որեւէ խոչընդոտ եւ որպէս «գաղթականների» բաց կը թողնի իր տարածքով[118]։

Սակայն այս ծրագիրը չյաջողուեց, քանի որ 1920 Յունուար-Փետրուարին Ռուսաստանի հարաւում «Սպիտակ Շարժում»ը պարտութիւն էր կրել Կարմիր Բանակի հարուածներից։ 1920 Յունուարի 18ին Սահակեանը զեկուցում էր նախարարութիւն, որ Սոչիի ռազմաճակատում գտնուող հայ ռազմիկների շարքերում կայ հայրենադարձութեան մտադրութիւն եւ նպատակայարմար էր գտնում հայկական զօրամասը տեղափոխել ՀՀ՝ Վրաստանի վրայով, միաժամանակ պահպանելով հանդերձանքը եւ զէնքը։ Հիւպատոսը համոզուած էր, որ վրաց իշխանութիւնները դէմ չէին լինի այս ծրագրին։ Բացի զօրակոչիկներից, զօրամասը համալրում էին նաեւ կամաւորներ եւ ժամանակակիցներին յայտնի էր, որ այն խռովայոյզ ժամանակ վերջինները ծառայում էին ոչ թէ որեւէ կուսակցական շահերի, այլ նախկին Ռուսաստանի սահմաններում յանուն միասնական պետականութեան[117]։ Այս առումով Սահակեանը մտահոգուած էր, որ նրանք կարող էին հեշտութեամբ հրապուրուել «նոր եւ ուժեղ», արդէն Խորհրդային Ռուսաստանի կարգախօսով ու դարձեալ օգտագործուել Վրաստանի դէմ[118]։ Այդ հարցում հիւպատոսի հետ համաձայն էին նաեւ ՀՀ ԱԳՆում[119]։

Յետագայ դէպքերը ունեցան արագ զարգացում։ 1920 Յունուարի 28ին Սոչիի եւ Սուխումի շրջանների սահմանագծին տեղի ունեցաւ ելոյթ՝ Կամաւորական Բանակի դէմ։ Ելոյթը գլխաւորում էր «Սեւծովեան Ապի Ազատագրման Կոմիտէ»ն[120]։ Նրան ենթարկուող «Սեւծովեան Գիւղացիական Աշխարհազօրը» ընդհարումներից յետոյ՝ Փետրուարի 1ին գրաւեց Սոչին։ Շարժման սկզբից հայերի ժողովը որոշեց խիստ չէզոքութիւն պահպանել եւ դիմել ինքնապաշտպանութեան՝ եթէ նրա գոյութեան սպառնայ վտանգ։ Ա. Յակոբեանի վկայութեամբ հայ բնակչութեան դիրքորոշումը՝ որեւէ մարտնչող կողմի նկատմամբ, կարող էր վճռական դեր ունենալ։ Երկու ճամբարում էլ դժգոհութիւն էին յայտնում չէզոքութեան վերաբերեալ, քանի որ հայերը, չնայած բազմաթիւ խնդրանքների՝ նոյնիսկ սպրանքների, չներքաշուեցին կռուին։ Իսկ Կամաւորական Բանակի շարքերում ծառայողների վերաբերեալ Յակոբեանը յայտնում է, որ «Չնայած զինուորների՝ մանաւանդ անդրկովկասցիների բուռն ցանկութեան՝ վերադառնալ Հայաստան, եւ

մեր ջանքերի, [Չմշկեանի գումարտակը] մնաց Սոչիում եւ մասնակցեց կռիւներին, տալով մի քանի սպանուած եւ վիրաւոր: Կամաւորական Բանակի նահանջի ժամանակ բաւական թուով հայ սպաներ եւ զինուորներ մնացին Սոչիում եւ մեծ մասամբ թէեւ ձերբակալուեցին, բայց հետեզհետէ ազատ արձակուեցին»[121]: *Նաեւ յայտնի է, որ հայկական գումարտակը, լինելով Սոչիի կայազօր, մինչեւ քաղաքի զիջումը մասնակցել էր Մացեստա գետի վրայ 1920 Յունուարի 31ի մարտին: Միւս կռիւը հայ զինուորները մղել էին Փետրուարի 13ին՝ Շախէ գետի վրայ: «Կանաչների» շտաբը խոստանում էր, որ գերի ընկած կամ ապստամբների կողմը կամաւոր անցած Հայկական Զօրամասի զինուորները եւ սպաները որեւէ պատժամիջոցների չեն ենթարկուի:*

«Սպիտակների» անյաջողութիւնների հետեւանքով շարքային հայ զինուորների տրամադրութիւններում բեկում էր առաջացել: Բացի այդ, ակնյայտ էր որ ապստամբների կողմից հայ բնակչութեան շահերին որեւէ վտանգ չէր սպառնում: Ապստամբութեան ղեկավարութեանը ներկայացել էին հայ բանագնացները, որոնք քննարկում էին զէնքը ցած դնելու պայմանները: Լազարեւսկոյէ բնակավայրի մօտ Հայկական Զօրամասի մնացորդը, հիմնականում լինելով ներկայացուած կամակոր սպայական անձնակազմով, բոլորովին ջախջախուել էր, իսկ նրաց հրամանատար Զմշկեանը ընկաւ ռազմի դաշտում[122]: *«Սեւծովեան Գիւղացիական Աշխարհազօր»ի հրամանատար Ն. Վ. Վորոնովիչը յետագայ դրութիւնը նկարագրում է հետեւեալ կերպ.* «Կամաւորականների պարտուելուց յետոյ հայերը կտրուկ փոխեցին իրենց քաղաքական ուղղութիւնը եւ փորձեցին վերականգնել նախկինում եղած բարիդրացիական յարաբերութիւնները ռուս գիւղացիների հետ[123]: Սակայն վերջինները չէին ուզում խաղաղուել [Կամաւորականների] նախկին դաշնակիցների հետ եւ նրանց վերաբերւում էին բացայայտ թշնամանքով: Լուրեր էին պտտւում հայերի դէմ նախապատրաստուող ջարդի մասին»[124]: *Այդ անբարեացակամ մթնոլորտում Յակոբեանը այցելել էր «Ազատագրման Կոմիտէ»ի արտաքին յարաբերութիւնները վարող Վադիմ Զայկինին, որը սիրալիր վերաբերմունք ցուցաբերեց եւ ընդառաջեց Յակոբեանի միջնորդութեանը՝ հայ զինուորականներին տեղափոխել ՀՀ: Նա նոյնիսկ խոստացաւ օգտագործել իր կապերը վրացական կառավարութիւնում՝ այդ հարցին դրական ընթացք տալու համար*[125]: *Հանդիպման մասին Յակոբեանը 1920 Փետրուարի 29ին տեղեակ էր պահել Եւանգուլովին, շեշտելով, որ խռովարար ռուս գիւղացի-*

ների դէմ գործողութիւններում «մասնակից հայերի (թուով 80-100[126]) Սոչիում մնալը չափազանց անյարմար կողմեր ունի ազգերի յարաբերութիւնների տեսակէտից: Բացի այդ, նրանց պահելը մեզ վրայ չափազանց ծանր է նստում»[127]: *Յակոբեանը ուշացրել էր իր լրատուութիւնը, քանի որ Չայկինը կատարելով իր խոստումը Փետրուարի 23ին, գտնուելով Թիֆլիսում, այցելել էր Եւանգուլովին: Տալով որոշակի տեղեկութիւններ Սոչիում տիրող դրութեան մասին նա նաեւ ասել էր, թէ* «Հայկական գունդը մասնակցելիս է եղել զանազան պատժիչ խմբերի եւ մեծ վայրագութիւններ էր թոյլ տուել... Ապստամբած գիւղացիների դէմ գործում էր առանձին հայկական գումարտակ՝ սպայ Չմշկեանի գլխաւորութեամբ: Այդ գումարտակը միշտ ուղարկւում էր առաջաւոր ու վտանգաւոր դիրքեր եւ այդ պատճառով շատ զոհեր է տուել[128]: Նրա կազմից մնացել է այժմ շատ քիչ մարդ՝ մի մասը փախել է լեռներ, իսկ փոքր մասը գերի է ընկել եւ զինաթափ արուել: Գումարտակի գործերը զայրոյթ են առաջացրել տեղի բնակչութեան մէջ, ինչպէս նաեւ, մասամբ, տեղի հայերի նկատմամբ եւ գերիները՝ հենց նրանց կեանքի ապահովութեան համար տեղաւորուել էին բանտում»: *Եւանգուլովը նաեւ տեղեկացնում էր իր վերադաս մարմնին, որ* «Չայկինի խօսքերով, նրան յաջողուել է ժամանակի ընթացքում մեղմացնել հասարակութեան զայրոյթը[129] եւ այժմ այդ տպաւորութիւնը գրեթէ անցել է: Այժմ Չայկինը անհրաժեշտ է գտնում - եւ այդ մասին գրում է նաեւ Սահակեանը - դուրս հանել գումարտակի մնացորդները՝ մօտ 100 հոգի եւ ուղարկել տրանզիտով Վրաստանի վրայով Հայաստան: Հակառակ դէպքում կարող են անցանկալի երեւոյթներ տեղի ունենալ»[130]: *Ցանգելով որոշակի պայմանաւորուածութիւնների՝ Եւանգուլովի հետ, Չայկինը տեղեկացրել էր լրագրողներին, որ զէնքը ձեռքին գերի ընկած հայերը, եթէ կը պարտաւորուեն հայրենիք մեկնել, ապա Հայաստանի կառավարութեան երաշխաւորութեամբ ազատ են արձակուելու:*

Այսպիսով, Սոչիի եւ Սուխումի շրջանների սահմանամերձ տարածքում շուրջ մէկ տարի գործող Հայկական Զօրամասի ճակատագիրը աննախանձելի աւարտ ունեցաւ: Կամաւորական Բանակի կործանումից յետոյ տեղի զինուորները ցրուել էին իրենց տները: Եթէ 1920 Յունուարի կէսին Սահակեանը յիշատակում է 1500 ռազմիկի առկայութիւն, ապա Փետրուարի վերջերին ընթացիկ գրագրութեան մէջ խօսք է գնում շուրջ 150 զինուորի մասին, այն էլ որպէս կապիտան Չմշկեանի գումարտակի մնացորդներ: Սկզբից նրանց համարում էին «Ազատագրական Կոմիտէ»ի ռազմագերիներ, թէպէտ շուտով ազատ

արձակեցին։ Զլինելով տեղարնիկ, նրանք մնացել էին զուրկ որեւէ պարենային մատակարարումից։ Զինուորների ճակատագրով խիստ մտահոգուած էին Սոչիի ՀԱԽը, Սուխումի հիւպատոս Սահակեանը եւ Վրաստանում ՀՀ ներկայացուցիչ Եւանգուլովը։ Նրանց հեռագրերի եւ դիմումների շնորհիւ[131] գործը դրական լուծում ստացաւ ՀՀ կառավարութեան մակարդակով։ Ցաւոնի է, որ 1920 Մարտի 29ին Սոչիից տեղափոխուած 200 զինուոր արդէն գտնւում էր Թիֆլիսում[132]։ Իսկ Սոչիի հայ բնակչութեան զինակոչութեան հարցը նորից արծարծուեց, երբ շրջանում հաստատուեցին խորհրդային կարգեր։ 1920 Յուլիսի 12ին ՀՀ արտգործնախարարը յանձնարարել էր Վրաստանում ՀՀ ներկայացուցիչ Տիգրան Բեկզադեանին կանխել նրանց զօրակոչը՝ Կարմիր Բանակի շարքերը, Սերգէյ Կիրովի միջոցով[133]։

Սոչիի շրջանը Խորհրդային Ռուսաստանի կազմում յայտնուելուց ի վեր, տեղի հասարակաքաղաքական կազմակերպութիւնների հետ մէկտեղ, արգելուեց նաեւ տեղի ՀԱԽի գործունէութիւնը[134]։ Այսպիսով շրջանի հայութիւնը զրկուել էր իր կամքը արտայայտող եւ նրա շահերը հնարաւոր չափով պաշտպանող մարմնից։ ՀԱԽերը Վրաստանում եւս հանդիպում էին լուրջ խոչընդոտների՝ իրենց գործունէութեան մէջ։ Թիֆլիսում գտնուող Վրաստանի ՀԱԽը կարեւորագոյն էր համարում Վրաստանում հայ քաղաքացիներին ազգամշակութային ինքնավարութիւնով ապահովման հարցը։ Քանի որ, հիմնահարցին նուիրուած բազմաթիւ դիմումները եւ յայտարարութիւնները կառավարութեան կողմից մատնւում էին անուշադրութեան, Վրաստանի ՀԱԽը, նախագահ Բ. Թոփչեանի ստորագրութեամբ յատուկ թռուցիկ էր տարածել։ «Դիմումը» կոչ էր անում հայ բնակչութեանը՝ պահանջել Վրաստանի Սահմանադիր Ժողովից՝ ապահովել ապագայ Սահմանադրութիւնում մշակութային ինքնավարութեան սկզբունքը։ Նոյն թռուցիկում տպագրուել էին ենթադրեալ «Հայկական Ազգային ինքնավարութեան»[135] նուիրուած թեզեր։ Սակայն վրացական պաշտօնական շրջանակները բազմիցս զարմանք էին յայտնում փոքրամասնութիւնների՝ ազգամշակութային ինքնավարութիւն ունենալու ցանկութեան վերաբերեալ։ Վրաց գործիչները որպէս թաքնուած անջատողականութիւն էին դիտում այդ ձգտումը[136]։ Նրա կանխման նպատակով, Վրաստանի Ներքին Գործերի Նախարարութիւնն արգելում էր հայ բնակչութեանը՝ Վրաստանի ՀԱԽը կազմել ուղղակի ընտրութեան միջոցով։ Բացի այդ, իշխանութիւնները գործող ՀԱԽերին նոյնիսկ չէին տրամադրում իրա-

ական անձի կարգավիճակ եւ, հետեւապէս, չէին ճանաչում նրանց հասարակաքաղաքական լիազօրութիւնները[137]։

Զարմանալի չէ, որ Վրաստանի հայերի միջավայրում տարածում ունէր արտագաղթի տրամադրուածութիւն։ Հիւպատոս Սահակեանի տուեալներով Աբխազիայի Կոմիսարիատի որոշ անդամներ մտահոգութիւն էին յայտնում հայերի վերոյիշեալ ցանկութեան վերաբերեալ։ Իսկ Աբխազիայի լայն ինքնավարութեան կողմնակիցները դէմ էին դրան, քանի որ հայերի մեկնումից յետոյ նրանց տեղը կը զբաղեցնէին վրացի վերաբնակիչները[138]։ Ազգային ուժերի յարաբերակցութիւնը դեռեւս հնարաւորութիւն չէր տալիս նորաստեղծ վրացական պետականութեանը ամուր ոտքով կանգնել Աբխազիայում։ Սահակեանի կարծիքով, վրաց ղեկավար շրջանակները մտադրութիւն ունէին ուժեղացնել վրացական ազդեցութիւնը երկրամասում ու այդ նպատակին հասնելու համար նրանք չէին խուսափի որեւէ միջոցներից։ Փափաք էր առաջացել այդ նպատակին ծառայեցնել նաեւ հայկական գործօնը՝ որպէս լրացուցիչ հակակշիռ անջատամէտ աբխազներին։ Երբ Աբխազիայի իշխանութիւնները, օգտագործելով Սուխումի ՀԱԽի հեղինակութիւնը, առաջարկեցին հայ բնակչութեանը ընդունել Վրաստանի քաղաքացիութիւն, ՀԱԽը - ինչպէս հեգնանքով գրում է Սահակեանը - իր կամակատարութիւնով գերազանցեց վրացիների բոլոր սպասելիքները։ ՀԱԽի նախագահութիւնը, որը բաղկացած էր 20 հոգուց, խորհրդակցութեան հրաւիրեց հայաբնակ գիւղերի 10 կոմիսար (գիւղապետ) եւ 10 ներկայացուցիչ գիւղացիներից։ Ինքնակոչ համագումարի անունից յայտարարուեց Սուխումի շրջանի հայութեան կամքը՝ ընդունել Վրաստանի քաղաքացիութիւն[139]։ Հայերի կողմից Վրաստանի քաղաքացիութիւն ընդունելու պարագայում, հիւպատոսի կարծիքով, Հայաստանը կը զրկուէր նրանց հովանաւորելու իրաւունքից։ Միաժամանակ կար ձգտում՝ ուժեղացնել վրացական տարրը հայերի հաշուին։ Հիւպատոսը համոզուած էր, որ երբ վրացական իշխանութիւնների համար կը վերանար հայերի աջակցութեան անհրաժեշտութիւնը, ապա հայերը վաղ թէ ուշ դուրս կը մղուէին Աբխազիայից։ Հետեւապէս, վտանգ էր առաջանում, որ ՀՀ պաշտպանութիւնից զուրկ հայերը, որոնք կազմում էին երկրամասի բնակչութեան 25%ը[140], կը կորցնեն նաեւ շարժական գոյքը եւ կը դառնան ծանր բեռ՝ Հայաստանի համար[141]։ 1920 Յունիսի 2ի զեկուցագրում Սահակեանը յայտնում էր, որ հողօգտագործման առումով Սուխումի շրջանի հայութիւնը բաժանուում է 4 կարգի։ 80%ը մշակում էր պետական ֆոնդի հողերը՝ կապալավարձի հիմունքներով, որից իրա-

ունք ունէր օգտուել եւս մէկ տարի։ Յաջորդ 5%ը ձեռք էր բերել հողերը՝ ուրիշի անունով, բայց իշխանութիւնները չէին ճանաչում նրանց իրաւունքները։ Եւս 5%ը կազմող հայերը, օգտուելով կառավարական խառնաշփոթից, կարողացել էին ձեւակերպել հողի սեփականութիւնը իրենց անունով, սակայն կոմիսարիատը չէր ճանաչում սեփականատէրերի իրաւունքները՝ մինչեւ Վրաստանի քաղաքացիութեան ընդունումը։ Միայն 5%ը, որը ժամանակին ձեւակերպել էր Ռուսաստանի Կայսրութեան հպատակութիւնը եւ ճանաչւում էր օրէնքով որպէս Վրաստանի քաղաքացիներ, օգտւում էր լիակատար սեփականատիրոջ իրաւունքից[142]։ ԱԺԽի պատուիրակութիւնը 1920ի ամռանը բողոքում էր Վրաստանի հողագործութեան նախարար Նոյ Խոմերիկիին, որ Գագրայի տեղամասում կատարւում է վրացիների վերաբնակեցում՝ Գուրիայի մարզից, մինչ տեղացիներին հողը նոյնիսկ կապալավարձով չէր տրւում։ Այս ամէնն ասելով, պատուիրակները չեշտում էին միայն արխազների եւ մեգրէլների իրաւունքները, իսկ հայերի մասին խօսք չկար[143]։

1920ի ամռանը Երեւան ժամանած Սուխումի ՀԱԽի լիազօրներ Եղիա Մուսելիմեանը եւ Երուանդ Մինասեանը Յուլիսի 8ին «Զեկուցագիր» յղեցին ՀՀ վարչապետին։ Այստեղ նրանք բացատրում էին ՀԱԽի նախագահութեան վրացամէտ դիրքը, գտնելով, որ Սուխումի շրջանի հայերի շահերին սպառնալիք էին ստեղծել հայ-վրացական պատերազմը եւ Սոչիի հայութեան աջակցութիւնը՝ Դենիկինին։ Բացի այդ, վրաց տիրապետութիւնը բերել էր հայերի նկատմամբ մեգրէլների[144] ագրեսիւ վերաբերմունքին, որոնք մինչ այդ ունէին հաշտ դիրք։ Քանի որ հողազուրկ մեգրէլ գիւղացիները 1918ին դարձել էին բոլշեւիզմի կողմնակիցները Արխազիայում, իշխանութիւնները տարածում էին նրանց շրջանակներում ագգայնական տրամադրութիւններ՝ սոցիալական պահանջներից գերծ պահելու նպատակով[145]։ Այդ պահին, մեգրէլները իրենց համարելով արտօնեալ եւ առաջին հերթին պետութիւն ձեւաւորող տարր, սկսել էին մրցել հայերի հողաբաժիններին եւ կարողութեանը տիրելու համար, քանի որ վերջինները ժամանակին վերցրել էին ամենալաւ հողամասերը։

Հողային բարեփոխման իրականացման կապակցութեամբ կատարւում էր Վրաստանի քաղաքացիութիւն ունեցող գիւղացիներին արխազ իշխաններից եւ ռուս խոշոր հողատէրերից բռնագրաւուած հողի վաճառքը։ Ստեղծուել էր իրական հնարաւորութիւն տեղի հայերի համար՝ սեփականել տարիներով կապալավարձի հիմունքներով մշակուող հողը։

Սուխումի ՀԱԽի կարծիքով, պահից օգտուելու համար կար միակ միջոց՝ հաշտ դիրք ունենալ Վրաստանի կառավարութեան նկատմամբ։ Այդ նպատակով Հայ Համագումարը որոշեց առաջարկել տեղի հայութեանը ընդունել Վրաստանի քաղաքացիութիւն եւ ծառայել նրա բանակում։ Այդ քայլից յետոյ, կարճ ժամանակահատուածում իշխանութիւնները գործադրեցին կտրուկ միջոցներ, վերջ տալով հայերի դէմ ուղղուած մեգրէլ եւ արխազ տարրերի հալածանքներին։ Մխախոտի հայ «սպեկուլեանտները» սակայն, տուժել էին պետական մենաշնորհից եւ հակավրացական քարոզչութիւն էին տանում։ Այդ իսկ պատճառով, ՀԱԽի պատուիրակների խօսքերով, տարածւում էին ասէկոսէներ, թէ Վրաստանի քաղաքացիութիւն ընդունողները ընդմիշտ կը զրկուեն հայրենադարձութիւնից։ ՀԱԽը համոզուած էր, որ Վրաստանի կառավարութիւնը միշտ էլ կ՝աջակցի հայերի հայրենադարձութեանը, նպատակ ունենալով փոխարէնը Աբխազիայում բնակեցնել վրացիներին։ ՀԱԽի կարծիքով հայրենադարձութեան համար նպաստաւոր պայմաններ դեռեւս չէին ստեղծուել[146]։ Որպէս վրաց իշխանութիւնների բարեացակամ դիրքորոշման եւ ՀԱԽի եռանդուն աշխատանքի ապացոյց ասւում է, որ հայկական դպրոցների թիւը աճել էր 12ից 30ի, որտեղ ուսանում էին 1567 աշակերտ, այդ թւում 511 աղջիկ։ Դպրոցներում դասաւանդում էր 57 ուսուցիչ[147], որոնց աշխատանքը հսկում էին շրջանային տեսուչը եւ հրահանգիչը։ Այս առումով պատուիրակները բողոքում էին հիւպատոս Սահակեանից, որը, չճշտելով իրավիճակը, սկսեց բաժանել Հայաստանի անձնագրերը զինակոչիկներին։ Քանի որ հիւպատոսարանը լայն գործունէութիւն էր ծաւալել հայրենադարձութեան ուղղութեամբ, փոխուեց վրաց պետական շրջանակների վերաբերմունքը Աբխազիայի հայերի նկատմամբ՝ որպէս ժամանակաւոր տարրի[148]։ Այնինչ, Սուխումի ՀԱԽի անդամների մէկ այլ վկայութեամբ, նրանք դեռեւս 1918ին դիմել էին Թիֆլիսի ՀԱԽին եւ ՀՀ կառավարութեանը՝ հայրենադարձութեան խնդրանքով, սակայն մերժուել էին միջոցների եւ յարմար բնակելի տարածքների բացակայութեան պատճառով[149]։ Պատուիրակները ՀԱԽի անունից առաջարկում էին կամ փակել հիւպատոսարանը, կամ էլ փոխել հիւպատոսին՝ նշանակելով Սուխումի ՀԱԽի հետ համաձայնեցուած անձ (ցանկալի էր՝ համշէնահայ)[150]։

Համադրելով Սահակեանի եւ Սուխումի ՀԱԽի կարծիքները, ՀՀ կառավարութիւնը եկաւ այն եզրակացութեան, որ Սուխումի հայութիւնը վաղ թէ ուշ արխազների եւ մեգրէլների ճնշման տակ ստիպուած է լինելու լքել շրջանը։ Մարտավարական նկատառումներով, Վրաստա-

նի կառավարութիւնը դեռ աջակցում էր տեղի հայերին՝ որպէս լրացուցիչ հակակշիռ անջատամէտ աբխազներին։

Նորաստեղծ ՀՀն ունէր հայ բնակչութեան սուր կարիք եւ, կառավարութեան անդամների կարծիքով, պէտք էր ամէն կերպ աջակցել հայրենադարձական տրամադրութիւններին, միաժամանակ ընդդիմանալով Վրաստանի քաղաքացիութեան ընդունմանը։ Կառավարութիւնը կասկածում էր, որ դառնալով քաղաքացի եւ հողի լիիրաւ սեփականատէր, հայ գիւղացին այլեւս չի ցանկանայ բռնել հայրենադարձութեան ճանապարհը։ Որոշուել էր ՀՀ կառավարութեան մակարդակով պաշտպանել տեղի հայերի շահերը եւ նրանց շարժական գոյքը, որը հնարաւորութիւն կը տար հայրենիքում ստեղծել նոր տնտեսութիւն։ Ելնելով նշուածից, նպատակայարմար էր համարուել՝ առաջարկել Վրաստանի կառավարութեանը Սուխումի շրջանի բոլոր հայերին ՀՀ քաղաքացի ճանաչել, բացառութեամբ առանձին հրաժարուողների, խնդրել պահպանել իրենց կապիտալարձի իրաւունքները եւս 2-3 տարով, որից յետոյ թոյլատրել հայրենադարձութիւնը ամբողջ շարժական գոյքով[151]։

Վրաստանի խորհրդայնացումից յետոյ, Աբխազիայի հայ համայնքի համար մշակուած ՀՀ կառավարութեան ծրագիրը մոռացութեան մատնուեց, իսկ տեղի հայութեան կեանքում սկսուեց նոր ժամանակաշրջան։ Համշէնահայ համայնքը կոմունիստական ամբողջատիրութեան տարիներին այլեւս չէր կարող խաղալ որեւէ գործօնի դեր՝ Աբխազիայի ներքաղաքական կեանքում, եւ տեղի ՀԱԽի ցրումից յետոյ նոյնիսկ զրկուել էր ենթադրեալ մշակութային ինքնավարութիւն ունենալու հնարաւորութիւնից։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Մինչեւ 1936ը Աբխազիայի կենտրոնը կոչուել է Սուխում, որից յետոյ գործադրուել է վրացացուած տարբերակ՝ Սուխումի։ Աբխազներն անուանում են իրենց մայրաքաղաքն Ակուա, իսկ երկիրը՝ Ափսուա։

[2] Աւելի քան հազար հինգ հարիւր տարի համշէնահայերն ապրել են պոնտական ամենաբարձր լեռնալանջերին, Քաջքար կոչուող լեռան ստորոտում, կիսանկախ եւ ինքնուրոյն կեանքով։ Թուրքական ազգահալած քաղաքականութեան հետեւանքով համշէնահայերի մեծ մասը ստիպուած է եղել հեռանալ իր մայրենի ոստաններից՝ Համշէնից եւ նրան յարակից Սիւրմէնէ գաւառներից ու հիմնականում բնակութիւն հաստատել Տրապիզոն, Օրդու, Սամսոն գաւառներում (Բարունակ Թորոյաքեան, «Համշէնահայերն», Գրական Թերթ, 24 Մայիս 1968)։

[3] Istoria Abkhazii (Աբխազիայի Պատմութիւն), Գուդաուտա, «Այաշարա», 1993, էջ 207։

[4] Mikhayil Minasian, "Pereseleniye Amshenskikh Armyan Na Chernomorskoye Pobereg'ye Kavkaza I Perviye Shagi Ikh Khozyaystvennoy Deyatel'nosti (Poslednyaya Chetvert' XIX v.)" (*Համշէնահայերի Գաղթը Կովկասի Սեւ Ծովեան Ափին Եւ Նրանց Տնտեսական Գործունէութեան Առաջին Քայլերը* (XIX դ. վերջին քառորդ), *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1977, (409) *Յունուար*, 1, էջ 64-73։

[5] *Հայաստանի Ազգային Արխիւ* (*ՀԱԱ*), *Արտաքին Գործերի Նախարարութեան Ֆոնդ* 200, *ց*.1, *գ*, 409, *թ*. 11-12 (*ռուս*.)։

[6] *Նոյն*, *թ*. 46 (*ռուս*.)։

[7] Gemal Gamakhariya, Badri Gogiya, *Abkhaziya-Istoricheskaya Oblast' Gruzii (Istoricheskie Dokumenti, Materiali, Kommentarii S Drevnejshih Vremen Do 30-h Godov XX veka)* (*Աբխազիա՝ Վրաստանի Պատմական Մարզ* (*Պատմական Փաստաթղթեր, Նիւթեր, Մեկնաբանութիւններ Վաղեմի Ժամանակներից Մինչեւ Ի. դարի 30ականները*), *Թբիլիսի*, «*Ագդոմա*», 1997, էջ 411, *վաւ*. No. 221 (*ռուս*.)։

[8] *Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութիւնը* 1903*ին պառակտուել էր երկու հակամարտող թեւերի։ Մէկը կազմեցին բոլշեւիկները* (*մեծամասնականներ, կոմունիստներ*), *իսկ երկրորդը՝ չափաւոր սոցիալ-դեմոկրատները* (*մենշեւիկներ*)։ *Վերջինիս պատկանում էին նաեւ վրաց սոցիալ-դեմոկրատները, որոնք* 1918*ին ձեւաւորեցին սեփական կուսակցութիւն*։

[9] Gamakhariya, Gogiya, *էջ* 404, *վաւ*. No. 219։

[10] Georgi Dzidzariya, *Kiaraz* (*Կիարազ*), *Սուխումի*, «*Այաշարա*», 1981, *էջ* 30, 34, 36, 38, 43։

[11] Gamakhariya, Gogiya, *էջ* 396, *վաւ*. No. 213։

[12] *ՀԱԱ*, *Ֆ*. 200, *ց*. 1, *գ*. 409, *թ*. 61։

[13] *Ertoba* (*Միասնութիւն*) *Թերթ*, 17 *Ապրիլ* 1918 (*վրաց*.)։

[14] Gamakhariya, Gogiya, *էջ* 404, *վաւ*. No. 219։

[15] 1918 *Յունուարի* 7*ին բոլշեւիկների կառավարութիւնը լուծարեց Ռուսաստանի Սահմանադիր Ժողովը։ Այսրկովկասի բնակչութեան կողմից ընտրուած նրա անդամները* 1918 *Փետրուարի* 10*ին Թիֆլիսում ձեւաւորել էին նոր մարմին՝ Սէյմ, որը նախագահում էր վրաց սոցիալ-դեմոկրատ Ն. Թիէիձէն։* 1918 *Ապրիլի* 9*ին Սէյմը հռչակեց անկախ Անդրկովկասի* (*Այսրկովկասի*) *Դեմոկրատական Դաշնային Հանրապետութիւնը, որը տարրալուծուեց* 1918 *Մայիսի* 26*ին*։

[16] *ՀԱԱ*, *Ֆ*. 200, *ց*. 1, *գ*. 409, *թ*. 61, *նաեւ՝* Gamakhariya, Gogiya, *էջ* 90։ 1926*ի մարդահամարը հաստատում է հայաթափումը մեծաւմասամբ արխազ բնակչութիւն ունեցող Կոդորի եւ Գուդաուտայի գաւառներում, որտեղ հայերը հիմնականում փոխարինուեցին ռուսներով* (Grigori Legava, *Izmeneniye Klassovo-Nacional'noy Strukturi Naseleniya Abkhazii* (*Աբխազիայի Բնակչութեան Դասակարգաազգային Կառուցուածքի Փոփոխում*), *Սուխումի*, «*Այաշարա*», 1989, *էջ* 16-20, *աղիւսակ* 5։

[17] *Istoria Abkhazii*, *էջ* 299-301, *նաեւ՝* Gamakhariya, Gogiya, *էջ* 81-82։

[18] *ՀԱԱ*, *Ֆ*. 200, *ց*. 1, *գ*. 409, *թ*. 61։

[19] *Sakartvelo* (*Վրաստան*) *Թերթ*, 4 *Յուլիս* 1919 (*վրաց*.)։

[20] *ՀԱԱ*, *Ֆ*. 200, *ց*. 1, *գ*. 409, *թ*. 60։ *Հայերը չրջանի գիւղացիական ընդհանուր բնակչութեան* 30%*ն էին կազմում* (Denikin-Judenich-Vrangel, *Memuary* (*Յուշեր*), *Մոսկուա-Լենինգրադ*, *Պետական Սոցիալտնտեսական Հրատարակչութիւն*, 1931, *էջ* 165)։

[21] ՀԱԱ, Վրաստանի ՀԱԽի Ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 8 (ռուս.)։

[22] Վրաստանի Կենտրոնական Պետական Պատմական Արխիվ (ՎԿՊՊԱ), Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության Կառավարության Քարտուղարության Ֆ. 1861, ց. 2, գ. 28, թ. 4 (ռուս.)։

[23] ՀԱԱ, Թիֆլիսում ՀՀ Ներկայացուցչության Ֆ. 276, ց. 1, գ. 62, թ. 1։

[24] ՀԱԱ, Ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 8 (ռուս.)։

[25] ՀԱԱ, Ֆ. 276, ց. 1, գ. 62, թ. 1։

[26] ՀԱԱ, Ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 8, 11 (ռուս.)։

[27] ՀԱԱ, Ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 11-11 շրջ. (ռուս.)։

[28] Նույն, թ. 12 շրջ. (ռուս.)։ Վրաստանի կառավարությունը Սոչիի շրջանին ներքին ինքնավարություն տրամադրելու խոստումը չկատարեց։ Նա ձգձգում էր ինքնակառավարման մարմինների ընտրությունները (Denikin-Judenich-Vrangel, էջ 161-162)։

[29] ՀԱԱ, Ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 8-8 շրջ. (ռուս.)։ Վրաստանի կառավարությունը ճանաչել էր կայսերական Գերմանիայի հովանավորությունը եւ հրաւիրել էր երկիր՝ գերմանական բանակը, ցանկանալով կանխել Թուրքիայի ոտնձգությունները։ Աշխարհամարտի աւարտից յետոյ գերմանացիներին փոխարինեցին բրիտանական զօրամասերը։

[30] Նույն, թ. 11 շրջ. (ռուս.)։

[31] ՎԿՊՊԱ, Ֆ. 1861, ց. 2, գ. 26, թ. 38-40 (ռուս.)։

[32] «Ք. Սոչիի Սոցիալիստական Կուսակցությունների Խորհրդի Բանաձեւ, 18 Սեպտեմբեր 1918», *Dokumenty I Materialy Po Vneshney Politike Zakavkazya I Gruzii* (Փաստաթղթեր եւ Նիւթեր Անդրկովկասի եւ Վրաստանի Արտաքին Քաղաքականության Մասին), Թիֆլիս, 1919, էջ 388-389, վաւ. No. 193 (ռուս.)։

[33] «Պատերազմի Վերջը», *Ertoba*, 29 Դեկտեմբեր 1918 (վրաց.)։ Այդպէս էին մտածում սոցիալ-դեմոկրատները, իսկ ազգային-դեմոկրատների մամուլը գրում էր. «Այժմ մենք մղում ենք հայերի դէմ իրական ցեղային պայքար։ Այս պատերազմը պէտք է որոշի ո՞վ կը գերիշխի Կովկասում։ Մեր օգտին է կենսաբանական եւ մշակութային առաւելութիւնը, ինչպէս նաեւ պատմական աւանդոյթները» («Ցեղային Պատերազմ», *Sakartvelo*, 22 Դեկտեմբեր 1918 (վրաց.)։

[34] ՀԱԱ, Բաքուի ՀԱԽի Ֆ. 223, ց. 1, գ. 60, թ. 1-2։ Փաստերի իսկութիւնը հաստատում է Վրաստանի Ռուսական Ազգային Խորհրդի նախագահ Ֆ. Լեբեդեւի նամակում (Նույն, թ. 32)։

[35] Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Երեւան, «Հայաստան», 1993, էջ 243-244։ Մանրամասն տե՛ս՝ ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 238, թ. 1-55։ Այդ տհաճ դէպքերը համաւօտ յիշատակում են վրաց հեղինակները (Avtandil Menteshashvili, *Oktyabr'skaya Revolyuciya I Nacional'no-Osvoboditel'noye Dvijeniye V Gruzii 1917-1921* (Հոկտեմբերեան Յեղափոխությունը եւ Ազգային-ազատագրական Շարժումը Վրաստանում 1917-1921 թթ.), Թբիլիսի, «Գանաթլեբաս», 1987, էջ 131)։

[36] ՎԿՊՊԱ, Ֆ. 1861, ց. 2, գ. 116, թ. 15 (ռուս.)։

[37] ՀԱԱ, Ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 7 (ռուս.)։

[38] Նույն, թ. 9 (ռուս.)։

[39] Թէպէտ մէկ այլ փաստաթղթում նա տրտնջում էր, որ երկար ժամանակ ՀԱԽը ծանր բեռ էր տանում տեղի հայերին զերծ պահելով վրացական իշխանության դէմ բաց ելոյթից (ՀԱԱ, Ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 9 շրջ. (ռուս.)։

[40] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 12-12 շրջ. (ռուս.)։
[41] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 9-9 շրջ. (ռուս.)։
[42] Կրոնական սպայական կոչում։
[43] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 13-13 շրջ. (ռուս.)։
[44] Նոյն, թ. 13 շրջ. (ռուս.)։
[45] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 140, թ. 3,4 (ռուս.), նաեւ՝ նոյն, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 2-3 (ռուս.), նաեւ՝ նոյն, գ. 56, թ. 9 շրջ. (ռուս.)։
[46] ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 116, թ. 22 (ռուս.)։
[47] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 14 (ռուս.)։
[48] Նոյն։
[49] Նոյն, թ. 9 շրջ. (ռուս.)։
[50] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 140, թ. 3,4 (ռուս.)։
[51] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 2-3 (ռուս.)։
[52] Նոյն։
[53] Նոյն, թ. 9 շրջ. (ռուս.)։
[54] ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 38, թ. 17-21 (ռուս.)։
[55] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 7 (ռուս.)։
[56] Նոյն, թ. 4-5 (ռուս.)։ Պարզ պատճառներով փաստաթուղթը չէր հրապարակուել Վրաստանի կառավարութեան կողմից, ի տարբերութիւն 1919 Յունուարի 5ի հաւաքի բանաձեւի, որը դեռեւս արտայայտւում էր կողմ Վրաստանի կառավարմանը, իսկ շրջանի ճակատագիրը նպատակայարմար էր գտնում լուծել միջազգային վեհաժողովում (Dokumenty, էջ 415-416, վաւ. No. 199)։
[57] Եւգենի Գեգեճկորիի տուեալներով Սոչիի շրջանում վրաց բնակչութիւնը կազմում էր 21-22%, որոնք հիմնականում բնակւում էին Պլաստունսկոյէ գիւղում (մեգրէլների շուրջ 2000 տնտեսութիւն), Dokumenty, էջ 403, 409-410։ Այլ տեղեկութիւններով նա չէր գերազանցում 5%ը ("Dobrovol'cheskaya Armiya I Gruziya" (Կամաւորական Բանակը եւ Վրաստանը), Zakavkazskoye Slovo (Անդրկովկասեան Խօսք) թերթ, Թիֆլիս, No 23, 14.02.1919)։
[58] ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 6-6 շրջ. (ռուս.)։
[59] Անդամներ՝ Կուպրաշուիլի եւ Տէր-Գրիգորեան (ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 56, թ. 9 շրջ. (ռուս.)։ Նախկին սպայ, սոցիալիստ-յեղափոխական Տէր-Գրիգորեանը վարում էր Կառավարութեան Ներկայացուցչի Գրասենեակի պետի պաշտօնը, իսկ մինչ այդ եղել էր Սոչիի Քաղաքային Դումայի եւ Բանուորական Պատգամաւորների Խորհրդի Գործկոմի նախագահ (Denikin-Judenich-Vrangel, էջ 164-165)։
[60] ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 116, թ. 22-27 (ռուս.)։
[61] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 350, թ. 2 շրջ. 3։
[62] Istoria Abkhazii, էջ 305։
[63] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 450, թ. 3, 5 (ռուս.)։
[64] Նոյն, գ. 350, թ. 3։ Հակահայկական քարոզչութեան արձագանգը պարզ երեւում է 1922ին հրատարակուած գնդապետ Վորոնովիչի յուշերում։ Նա գրում է, թէ «Սոչիի շրջանի գիւղացիութեան միջավայրում չկար Կամաւորական Բանակի այլ կողմնակից՝ բացառութեամբ վրացիներին ատող հայերի։ Կամաւորականների գործակալները, օգտագործելով հայերի եւ վրացիների միջեւ թշնամութիւնը, կապ էին

հաստատել տեղի դաշնակցականների կոմիտէի հետ, որոնց միջոցով նախապատրաստում էին հայերի ելոյթը ընդդէմ վրացական տիրապետութեան։ Թէպէտ Կամաւորականները յարձակուեցին աւելի վաղ, քան բռնկուեց ապստամբութիւնը, հայերի ջոկատները աջակցելով նրանց՝ հարուածեցին վրացական զօրքերի թիկունքին» (N. V. Voronovich, "Zelyoniye" Povstanci Na Chernomorskom Poberegye" (*«Կանաչ» Ապստամբները Սեւ Ծովի Ափին*), Denikin-Judenich-Vrangel, էջ 162, 164)։ *Հայերի դերի մասին ոչինչ չի ասում Լուկոմսկին, նշելով, որ՝* «Փետրուարի 4ին վրացական զօրքերը կատարել էին անբարեացակամ (՞) գործողութիւններ մեր դէմ եւ գեներալ Դենիկինը հրամայեց անցնել յարձակման եւ գրաւել Սոչին» (Denikin-Judenich-Vrangel, էջ 99)։ *Պարզ է, որ շրջանին պատասխանատու վրաց պաշտօնեաները արդարանալու կարիք ունէին անսպասելի պարտութեան համար, թէեւ ժամանակակիցներին յայտնի էր տեղում վրացական զօրքերի պետ՝ գեներալ Ղոնիեւի կատարեալ ապաշնորհութիւնը ռազմական ոլորտում* (Voronovich, էջ 162)։ *Սոչիի իրադարձութիւնների պատճառով Թիֆլիսում 1920 Յուլիսի 30ից Օգոստոսի 2ը տեղի ունեցաւ դատ։ Սոչիի եւ Սուխումի շրջաններում վրացական զօրքերի հրամանատարութիւնը մեղադրւում էր ծառայողական անփութութեան մէջ։ Դատի ժամանակ խօսք եղաւ նաեւ հայերի մասին։ Դատախազի հարցին՝ մի՞թէ եղել էին բռնութիւններ հայերի նկատմամբ, նախկին ռազմական նախարար Գէորգաձէն պատասխանեց.* «Եթէ էլ եղել են, ապա առանձին դէպքեր»։ *Իսկ երկրորդ հարցին, թէ արդեօք կամաւորականների առաջխաղացումը պայմանաւորուած էր վրաց զինուորների անկարգութիւններով, վկայի պատասխանը եղաւ.* «Այդպէս էին բացատրում անգլիացիները» (*Slovo* (*Խօսք*), 03.08.1920, No. 173, (*ռուս.*)։ *Բրիտանական Միսիայի պետ Բրիգզը հրաւիրել էր արտգործնախարար Գեգեճկորիի ուշադրութիւնը Սոչիում վրացական զօրքերի վատ պահուածքի վրայ (Բանակցութիւնների սղագրութիւն, Թիֆլիս,* 23.05.1919, Avtandil Menteshashvili, *Iz Istorii Vzaimootnosheniy Gruzinskogo, Abkhazskogo I Osetinskogo Narodov 1918-1921* (*Վրաց, Աբխազ եւ Օս ժողովուրդների Փոխյարաբերութիւնների Պատմութիւնից* 1918-1921 *թթ.*), *Թբիլիսի, «Ջնանիէ»*, 1990, էջ 29)։

[65] *ՀԱԱ*, *Ֆ*. 441, *ց*. 1, *գ*. 56, *թ*. 14 (*ռուս.*)։

[66] *Նոյն*, *գ*. 56, *թ*. 1-1 *շրջ*. (*ռուս.*)։

[67] *ՎԿՊՊԱ*, *Ֆ*. 1861, *ց*. 2, *գ*. 26, *թ*. 38-40 (*ռուս.*)։

[68] *ՎԿՊՊԱ*, *Ֆ*. 1861, *ց*. 2, *գ*. 28, *թ*. 28-30 *շրջ*. (*ռուս.*)։

[69] *Բրիտանական հրամանատարութիւնը պաշտօնապէս առաջարկել էր վրացական կողմին չէզոքացնել վիճելի Սոչիի շրջանը՝ տեղում ամբողջ իշխանութիւնը բնակչութեան կողմից ընտրուած ինքնակառավարման մարմիններին յանձնելով։ Չէզոքութեան պահպանման համար նախատեսւում էր շրջանում անգլիական զօրամաս տեղակայել* (Denikin-Judenich-Vrangel, էջ 163)։

[70] *ՎԿՊՊԱ*, *Ֆ*. 1861, *ց*. 2, *գ*. 28, *թ*. 91-93 (*ռուս.*), *Նաեւ՝ «Սոչիի Բնակիչների Հաւաքի Բանաձեւը Վրաստանին Միանալու Մասին, 20 Սեպտեմբեր* 1918», *Dokumenty*, էջ 390, *վաւ*. No. 195։ *Ռուսաստանի Սահմանադիր Ժողովը* 1918 *Յունուարի 5ին հռչակել էր Ռուսաստանի Դեմոկրատական Դաշնային Հանրապետութիւնը։ Բոլշեւիկների կառավարութիւնը լուծարելով Սահմանադիր Ժողովը ի չիք արեց այդ որոշումը։*

[71] *ՀԱԱ*, *Ֆ*. 441, *ց*. 1, *գ*. 56, *թ*. 10 (*ռուս.*)։

[72] ՀՀ ԱԳ նախարարին յղած նամակում նա ներկայանում էր որպէս Սոչիի շրջանի Պիլենկուս եւ Գագրա աւանների ներկայացուցիչ (ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 14)։

[73] Նոյն, թ. 14

[74] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 15։

[75] Denikin-Judenich-Vrangel, էջ 100։

[76] Կամաւորական բանակի հրամանատար, քաղաքացիական պատերազմի ընթացքում հակակոմունիստական «Սպիտակ Շարժման» ղեկավար Ռուսաստանի հարաւում։

[77] Վրաց պատմաբանները գրում են, թէ «Պատահաբար չէ, որ Դենիկինը ապաւինել էր նուաճած Սոչիի շրջանի Հայկական Ազգային Խորհրդի «ծառայութեանը», քանի որ նա որեւէ կերպ չէր կարող համանման կեղծաբուղթ ստանալ Աբխազիայի հայ բնակչութեան «պաշտօնական ներկայացուցիչներից», Gamakhariya, Gogiya, էջ 91։ Իրօք, եթէ որպէս օրինակ ունենանք - մինչեւ վրացական զօրքերի հեռանալը Սոչիի շրջանից - հայերի ահաբեկման բազմաթիւ արձանագրուած դէպքերը, պարզ է դառնում Սուխումի շրջանի ՀԱԽի լռութիւնը։

[78] Denikin-Judenich-Vrangel, էջ 100։

[79] Gamakhariya, Gogiya, էջ 90-91։

[80] Menteshashvili, էջ 24։

[81] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 1 շրջ.։

[82] Նոյն, գ. 409, թ. 3, 4 (ռուս.)։

[83] Նոյն,, թ. 5 (ռուս.)։

[84] Նոյն, թ. 11-12 (ռուս)։

[85] Նոյն, գ. 350, թ. 6։

[86] ՀԱԱ, Ֆ. 276, ց. 1, գ. 33, թ. 199, 200 (ռուս.)։

[87] Նոյն, թ. 136-136 շրջ.։

[88] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 350, թ. 8։

[89] ՎԿՊԱ, Ֆ. 1861, ց. 2, գ. 95, թ. 2 (ռուս.)։ Փաստաթուղթը լիշատակւում է՝ ՀԱԱ, Ֆ. 276, ց, 1, գ, 155, թ. 2 (ռուս.)։

[90] ՀԱԱ, Ֆ. 276, ց. 1, գ. 155, թ. 7 (ռուս.)։

[91] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 3։

[92] Նոյն, գ. 409, թ. 52 (ռուս.), նաեւ՝ նոյն թ. 53 (հայ.)։

[93] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 350, թ. 9 (ռուս.)։

[94] Նոյն, գ. 409, թ. 20, 21 (ռուս.)։

[95] Gamakhariya, Gogiya, էջ 91։

[96] Հայկազ Ալբրցեան, «Արխազիայի Հայկական Համայնքը», Հայրենի Ջաւախք, Պէյրութ, Ազգակ օրաթերթի Հրատարակչութիւն, 2002, էջ 380։

[97] Սոչիայ-Դեմոկրատ թերթ, No. 87, 20.10.1919, (ռուս.), նաեւ՝ Slovo, No. 188, 20.08.1920 (ռուս.)։

[98] Istoria Abkhazii, էջ 321։ Այս բողոքը ժխտում է այն տեսակէտը, թէ՝ հայ-վրացական «պատերազմից երկու-երեք ամիս անց վերականգնուեցին Վրաստանի հայութեան իրաւունքները, եւ նրանց կեանքը մտաւ նորմալ հունի մէջ» (Կարիճ Սարդարեան, Հայ-Վրացական Յարաբերութիւնները 1918-1921 թթ., Երեւան, «Նաիրի», 2002, էջ 92)։ Նոյնիսկ 1919 Նոյեմբերին «Խաղաղութեան պայմանագիրի գործելուց յետոյ Վրաստանի ՀԱԽի անդամները արձանագրում էին, որ «հայ բնակչութեան նկատ-

մամբ շուրջ երկու տարի տարուող անվստահութեան եւ ճնշման քաղաքականութեան արդիւնքում գրեթէ ամէն հայ դիտում է որպէս պետութեան թշնամի... Անկախ Վրաստանի գոյութեան 2 տարում հակահայութիւնը ոչ թէ թուլացել է, այլ հակառակը՝ ներգրաւել է վրացական հասարակութեան նորանոր շրջանակներ, վերածուելով մտաւորական երեւոյթից զանգուածայինի: Արմատները պէտք է փնտռել որոշակի պատմական եւ քաղաքական պայմաններում՝ որոնցում կայանում է Վրաստանի պետական անկախութիւնը...Վրացական ժողովրդի ազգային գիտակցութեան ամրապնդման նպատակով եւ ազգային պետութեան կառուցման վրայ նրա մտքի սեւեռման համար, վրացական մամուլը օգտագործում է ներքին թշնամու գաղափարը՝ յանձինս ազգային փոքրամասնութիւնների» (*Վրաստանի ՀԱԽի «Ցուշագիր»*, *ՀԱԱ*, *Ֆ*. 441, *ց*. 1, *գ*. 140, *թ*. 2,6, *ռուս*.).

[99] *ՀԱԱ*, *Ֆ*. 200, *ց*. 1, *գ*. 409, *թ*. 4 (*ռուս*.).

[100] *Նոյն*, *թ*. 11 (*ռուս*.).

[101] *Նոյն*, *թ*. 60.

[102] *Նոյն*, *թ*. 16 (*ռուս*.).

[103] Gamakhariya, Gogiya, *էջ* 463, *վաւ*. 254.

[104] Dzidzariya, *էջ* 51.

[105] *ՎԿՊՊԱ*, *Ֆ*. 1861, *ց*. 1, *գ*. 243, *թ*. 1-1 *շրջ*. (*վրաց*.).

[106] *ՀԱԱ*, *Ֆ*. 200, *ց*. 1, *գ*. 409, *թ*. 13-13 *շրջ*. (*ռուս*.).

[107] *Նոյն*, *թ*. 32-32 *շրջ* (*ռուս*.), *եւ թ*. 33-33*շրջ*. (*Հայ*.).

[108] *ՀԱԱ*, *Ֆ*. 276, *ց*. 1, *գ*. 33, *թ*. 264 *շրջ*. (*ռուս*.).

[109] Denikin-Judenich-Vrangel, *էջ* 166.

[110] *Նոյն*, *էջ* 165,187.

[111] *ՀԱԱ*, *Ֆ*. 200, *ց*. 1, *գ*. 350, *թ*. 3.

[112] *ՀԱԱ*, *Ֆ*. 200, *ց*. 1, *գ*. 409, *թ*. 3 (*ռուս*.), *եւ ց*. 1, *գ*. 551, *թ*. 4.

[113] *Իրականում՝ Ցակորեանի վկայութեամբ, զօրամասի գումարտակներից մէկը (2րդ վաշտ), կապիտան Զմշկեանի հրամանատարութեամբ, համալրուած էր ոչ-տեղացի հայերից: Հաւանաբար նրանցից էր նշանակուել զօրամասի հրամանատարական կազմը, որի թւում էին նաեւ ռուս սպաներ*, (*ՀԱԱ*, *Ֆ*. 200, *ց*. 1, *գ*. 551, *թ*. 2, 8): *Հայկական Զօրամասը կազմում էր Կամաւորական Բանակի 52րդ առանձին հետեւակային բրիգադի մաս* (Denikin-Judenich-Vrangel, *էջ* 179).

[114] *ՀԱԱ*, *Ֆ*. 200, *ց*. 1, *գ*. 409, *թ*. 1-2.

[115] *Հարաւային Ռուսաստանի «Սպիտակ» կառավարութիւն*.

[116] *ՀԱԱ*, *ՀՀ կառավարութեան քարտուղարութեան Ֆ*. 199, *ց*. 1, *գ*. 110, *թ*. 4-5 (*ռուս*.).

[117] *Ենթադրուել է, որ այդ մտքին օտար չէին որոշ ժամանակ նաեւ ՀՀի կառավարական շրջանակներում* (Denikin-Judenich-Vrangel, *էջ* 96), *նաեւ՝ Գեղամ Պետրոսեան*, *Հայաստանի Հանրապետութեան Առնչութիւնները Ռուսաստանի Հարաւի Ոչ-Մորհրդային Պետական Կազմաւորումների Հետ (1918թ. Ցունիս-Նոյեմբեր)*, *Երեւան*, *Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն*, 2004, *էջ* 27).

[118] *ՀԱԱ*, *Ֆ*. 200, *ց*. 1, *գ*. 409, *թ*. 3-4 (*ռուս*.). *1920ին արդէն պարզ էր, որ Մոսկուայի կոմունիստական կառավարութիւնը նպատակ ունի վերականգնել Ռուսաստանի կայսրութեան կազմում եղած տարածքների միասնականութիւնը, սակայն միանգամայն ուրիշ գաղափարական հիմքի վրայ:*

[119] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 5, 6 (ռուս.)։

[120] Ելոյթը նախապատրաստուել էր եւ իրականացուել Վրաստանի կառավարութեան գործուն աջակցութեամբ։ «Կոմիտէ»ն ձեւաւորել էին Թիֆլիսում ռուս սոցիալիստ-յեղափոխականները եւ նրանց ենթարկուող աշխարհազօրայինները, որոնք կոչւում էին «Կանաչներ»՝ կոմունիստ «Կարմիրներ»ից ու միապետական «Սպիտակներ»ից տարբերուելու համար։ «Կոմիտէ»ն ցանկանում էր հուշակել հանրապետութիւն Սուչիի շրջանի տարածքում, քանի որ պատրանք ունէր ազատ մնալ թէ՛ «Սպիտակներ»ի, թէ՛ «Կարմիրներ»ի տիրապետութիւնից։ Սակայն «Կոմիտէ»ի կառավարումը երկար չեղաւ եւ շրջանը նուաճուեց Կարմիր Բանակի կողմից (V. Favitski, "Zelyonnaya Armiya V Chernomor'ye", *Istoricheski Gurnal Isparta, Proletarskaya Revolyutsiya* («Կանաչ Բանակը Սեւ Ծովի Ափին», *Պրոլետարական Յեղափոխութիւն. Իսպարտի Պատմական Հանդէս, Մոսկուա-Լենինգրադ*, No. 8-9, 1924, էջ 43-65)։

[121] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 2-2 շրջ։

[122] Favitski, էջ 59, նաեւ՝ Voronovich, էջ 182, նաեւ՝ "Bor'ba Chernomorskikh Krest'yan S Dobrovol'tsami" (*Սեւծովեան Գիւղացիութեան Պայքարը Կամաւորականների Դէմ*), *Bor'ba* (*Պայքար*) թերթ, Թիֆլիս, N 46, 27.02.1920։

[123] 1919 Ապրիլին չկարողանալով հնազանդեցնել շրջանի ռուս գիւղացիներին, կամաւորական Բանակի հրամանատարութիւնը օգտագործելով ՀԱԱի համքաւը, նրա միջնորդութեամբ համոզել էր գիւղացիներին՝ զէնքը ցած դնել, սակայն յետագայում ելոյթի մասնակիցների նկատմամբ դաժան պատժամիջոցներ էին կիրառուել (Voronovich, էջ 167)։

[124] Վորոնովիչը հանդիսանում էր «Ազատագրման Կոմիտէ»ի անդամ (Voronovich, էջ 187)։ «Կոմիտէ»ի կազմում էր արդէն յայտնի Տէր-Գրիգորեանը, որը վարում էր Երջանաչին Կոմիսարի (ղեկավարի) պաշտօնը, *Slovo*, No. 164, 23.07.1920։ Վորոնովիչի տեսակէտը ժխտում էր «Կոմիտէ»ի մէկ այլ անդամ՝ Զայկինը, հաղորդելով, որ «ապստամբների եւ հայ բնակչութեան միջեւ յարաբերութիւնները այժմ կարելի է համարել միանգամայն բարեացակամ» ("V Chernomor'ye" (*Սեւ Ծովի Ափին*), *Bor'ba*, N 48, 29.02.1920)։ «Սպիտակներ»ի հեռանալուց յետոյ իրական կեանքը ցոյց տուեց, որ Սուչիի շրջանում տեղի հայ եւ վրացի բնակչութեան շահերի մէջ ոչ մի հակասութիւն չկայ։ Փոխադարձ մերձեցման ցանկութիւնը վերածուեց նոյնիսկ սրտագին յարաբերութիւնների։ Գորիում (Վրաստան) եղած երկրաչարժից յետոյ, անմիջապէս ստեղծուեց հայ-վրացական խառը կոմիտէ, որը կարճ ընթացքում հանգանակեց զգալի գումար՝ երկրաչարժի զոհերին օգնութեան ֆոնդի համար («Հայ-Վրացական Համերաշխութիւնը Սուչիում», *Աշխատաւոր* թերթ, Թիֆլիս, N 64, 19.03.1920)։

[125] Զայկինը նաեւ հանդիսանում էր «Կոմիտէ»ի ներկայացուցիչ՝ Վրաստանի կառավարութեան կից (Favitski, էջ 49)։

[126] Ն. թ. Փետրուարի 27ին, հիւպատոս Սահակեանին յղած նամակում, նա ասում է 150 սպայ եւ շարքային մասին, ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 8։

[127] Նոյն, թ. 2 շրջ։

[128] Հաւանաբար խօսքը գնում է «Կանաչ» պարտիզանների դէմ՝ 1919ի ընթացքում պայքարի մասին։

[129] Եւանգուլովի այն հարցին, թէ ինչ է ստիպել հոգատար ուշադրութիւն դարձնել հայազգի զինուորների ճակատագրին, Զայկինը պատասխանել էր, որ 1917ին Թուր-

քեստանում (Ռուսական Կենտրոնական Ասիա) տեղի հայերը օգնել էին իրեն ընտրուել՝ Ռուսաստանի Սահմանադիր Ժողով, ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 551, թ.4։

130 Նոյն , թ. 1 շրջ։

131 Նոյն, թ. 5, 7, 9։

132 Տե՛ս՝ ՀՀ Խնամատարութեան եւ Վերաշինութեան նախարարի զեկոյցը Վարչապետին, ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 13։

133 Խորհրդային Ռուսաստանի Ներկայացուցիչ Դեմոկրատական Վրաստանում, ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 17։

134 ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 28։

135 ՀԱԱ, Ֆ. 441, ց. 1, գ. 142, թ 1։

136 Նոյն, գ. 140, թ 1 (ռուս.)։

137 Նոյն, թ 14 (ռուս.)։ Թէպէտ այսօր պարզ է, որ դա չար կամքի հետեւանք չէր, այլ՝ որեւէ օրէնսդրական կարգաւորման բացակայութեան արդիւնք։ Վրաստանի ենթադրեալ սահմանադրութեան նախագիծը ընդգրկում էր ազգային փոքրամասնութիւններին նուիրուած գլուխ, որի 146րդ յօդուածը արձանագրում էր ազգային միութիւն ունենալու իրաւունքը, *Slovo*, No. 139, 23.06.1920, (ռուս.)։

138 ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 14 շրջ., 16 շրջ. (ռուս.)։

139 Նոյն, թ. 12 (ռուս.)։

140 1926ի մարդահամարը ասում է 1/7ի, կամ 14,2% մասին (*Istoria Abkhazii*, էջ 209)։

141 ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ, 409, թ. 16 (ռուս.)։

142 Նոյն, թ. 46 (ռուս.)։

143 Մեգրէլները, բուն քարթուէլները, սուանները, լազերը հանդիսանում են վրաց ազգութիւնները։

144 Gamakhariya, Gogiya, էջ 464, վաւ. 254։

145 *Ertoba*, 17 Ապրիլ 1918, (վրաց.), նաեւ՝ Gamakhariya, Gogiya, էջ 441, վաւ. No. 221։

146 ՀԱԱ, Ֆ. 200, ց, 1, գ. 409, թ. 61-61 շրջ։

147 Հայ ուսուցիչները տեղացի չէին. հրաւիրուելով աշխատանքի Նոյեմբերից-Մայիս, հատուցւում էին ընտրերքով՝ հիմնականում ծխախոտով (Andrey Chochua, *Sobraniye Sochineniy* (Երկերի ժողովածու), հատ. 3, Սուխումի, «Ապաշարա», 1978, էջ 90)։

148 ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 63։

149 ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 12։

150 Նոյն, թ. 64։

151 Նոյն, թ. 56 (ռուս.)։ Երկրամասի համշէնահայերի միջավայրում առկայ էին տրամադրութիւններ՝ վերադառնալ նաեւ Տրապիզոնի մարզ՝ Համշենք։ Նրանք հետաքրքրութեամբ հետեւում էին Փարիզի վեհաժողովում ընթացող բանակցութիւններին, ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 22։ Սուխումի տրապիզոնցիների հայրենակցական միութեան նախաձեռնութեամբ 1919 Յուլիսի 21ին Բաթումում մեկնարկել էր Համշէնահայերի Հայրենակցական Միութիւնների Համագումարը, որի օրակարգում էր հայրենադարձութեան խնդիրը (*Աշխատաւոր*, N 112, 08. 06. 1919, նաեւ՝ *Նոր Աշխատաւոր*, N 148, 25. 07. 1919)։ 1920 Մարտի 7ին Սոչիի ՀԱԽը, յղելով իր ողջոյնի խօսքը Ալեքսանդր Խատիսեանին, վստահեցնում էր «առաջին հնարաւոր պարագային ազատ հայրենիք ներգաղթելու ցանկութեան» մասին (*Աշխատաւոր*, No 68, 25. 03. 1920)։

[146] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 61-61 շրջ.

[147] Հայ ուսուցիչները տեղացի չէին. հրաւիրուելով աշխատանքի Նոյեմբերիից-Մայիս, հատուցւում էին բնաբերքով՝ հիմնականում ծխախոտով (Andrey Chochua, *Sobraniye Sochineniy* (Երկերի ժողովածու), հատ. 3, Սուխումի, «Այաշարա», 1976, էջ 90).

[148] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 63.

[149] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 12.

[150] Նոյն, թ. 64.

[151] Նոյն, թ. 56 (ռուս.). Երկրամասի համշէնահայերի միջավայրում առկայ էին տրամադրութիւններ՝ վերադառնալ նաեւ Տրապիզոնի մարզ՝ Համշէնք. Երանք հետաքրքրութեամբ հետեւում էին Փարիզի վեհաժողովում ընթացող բանակցութիւններին, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 551, թ. 22. Սուխումի տրապիզոնցիների հայրենակցական միութեան նախաձեռնութեամբ 1919 Յուլիսի 21ին Բաթումում մեկնարկել էր Համշէնահայերի Հայրենակցական Միութիւնների Համագումարը, որի օրակարգում էր հայրենադարձութեան խնդիրը (*Աշխատաւոր*, N 112, 08. 06. 1919, նաեւ՝ *Նոր Աշխատաւոր*, N 148, 25. 07. 1919). 1920 Մարտի 7ին Սոչիի ՀԱԽը, յղելով իր ողջոյնի խօսքը Ալեքսանդր Խատիսեանին, վստահեցնում էր «առաջին հնարաւոր պարագային ազատ հայրենիք ներգաղթելու ցանկութեան» մասին (*Աշխատաւոր*, No 68, 25. 03. 1920).

THE HAMSHEN ARMENIANS' COMMUNITY IN GEORGIA (1918-1920)

(Summary)

BENYAMIN MAILYAN

After the proclamation of independence in the Republic of Georgia, the status of the Sukhumi (Abkhazia) and Sochi districts of Georgia, on the western shore of the Black Sea, was not resolved. Alongside the interests of Georgian central government, the interests of the White Russian army, the local ethnic Abkhazians and the Red Army elements generated a dynamics which turned the region into an unstable political entity.

The control of this strategic land put these powers in conflict with each other, endangering the status and interests of the local Armenian minority too.

The author highlights the ups and downs of the Armenian community in the region and the margin of manouvering they had in safeguarding their interests. The community was faced with a dilemma. Their choice was either Georgian naturalization, which would grant them landholding rights, or Armenian citizenship and repatriation, which would free them from conscription in the Georgian army.

Furthermore, the border conflict between Armenia and Georgia negatively affected the local Armenians in December 1918. The shortlived consulate of the Republic of Armenia, inaugurated in November 1919, could not be of much help either. Things took a different turn with the Sovietization of this region of the Caucasus.